



ԱՂԵՏՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ





**ԱՂԵՏՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ
ԵՎ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	6
------------------------	---

ԳԼՈՒԽ 1.

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ	9
---------------------------------	---

1.1. Արտակարգ իրավիճակների լուսաբանման կարևորությունը	9
---	---

1.2 Արտակարգ իրավիճակների լուսաբանման սկզբունքները	10
--	----

1.3 Աղետների ռիսկերի նվազեցման և կառավարման վերաբերյալ պահանջվող գիտելիքներ	11
--	----

ԳԼՈՒԽ 2.

ԱՂԵՏՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	13
-----------------------------	----

2.1 Աղետների լուսաբանումը և դրա ազդեցությունը հասարակության վրա	13
--	----

2.2 Լրատվության առանձնահատկություններն արտակարգ իրավիճակներում	14
---	----

2.3 Լրատվամիջոցների դերն աղետների ժամանակ	15
---	----

ԳԼՈՒԽ 3.

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ	18
------------------------------------	----

3.1 Աղետների կառավարման ցիկլը և աղետների վերաբերյալ տեղեկատվության պահանջարկը	18
--	----

3.2 Երկրաշարժ	21
-------------------------	----

3.3 Սողանք	25
----------------------	----

3.4 Անտառային հրդեհներ	29
----------------------------------	----

ԳԼՈՒԽ 4.

ԱՂԵՏՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ 34

4.1 Հաղորդակցությունը դիսկի փուլում 34

4.2 ԶԼՄ–ների դերն աղետների դիսկի նվազեցման գործում 35

4.3 Աղետների ժամանակ գործողությունների պլանավորում 36

4.4 Հաղորդակցությունն աղետի ժամանակ 36

4.5 Հաղորդակցությունը վերականգնման փուլում 37

4.6 Գործողությունների ընդհանուր նկարագիրը 38

ԳԼՈՒԽ 5.

ԱՂԵՏՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՆ

ՈՒ ՕՐԻՆԱՊԱՇՏՏՈՒԹՅՈՒՆԸ 40

5.1 Մի վնասիր 40

5.2 Մի խանգարիր 41

5.3 Տեղեկատվության օպերատիվ հավաքագրում և լուսաբանում 42

5.4 Մեդիա ռազմավարություն 44

5.5 Առաջարկներ արտակարգ իրավիճակներ լուսաբանող լրագրողներին 44

ԳԼՈՒԽ 6.

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՄԵԴԻԱՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ 46

6.1 Ֆիզիկական անվտանգության ապահովումը 46

6.2 Հոգեբանական անվտանգության ապահովումը 48

6.3 Տարրական առաջին օգնություն 51

6.4 Անհատական պաշտպանության միջոցներ 52

ԳԼՈՒԽ 7.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ 54

7.1 Քաղաքացիների հիմնական իրավունքներն ու ազատությունը 54

7.2 Հեղինակային իրավունքների կարևորությունը աղետների լուսաբանման ժամանակ 55

7.3 Լրագրողական աշխատանքի էթիկական սկզբունքներն աղետներ լուսաբանելիս	55
---	----

ԳԼՈՒԽ 8.

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԻՆ-Ի, ՏԻՄ-ԵՐԻ

ԵՎ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ	57
8.1 Լրատվամիջոցների համագործակցությունը ԱԻՆ-ի հետ	57
8.2 Համագործակցությունն ԱԻՆ-ի, ՏԻՄ-երի և լրատվամիջոցների միջև	59

ԳԼՈՒԽ 9.

ԱՂԵՏՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ	60
9.1 Վերապատրաստման նպատակն ու կարևորությունը	60
9.2 Վերապատրաստում խմբագրությունում	62
9.3 ԱԻՆ-ի կողմից իրականացվող վերապատրաստումը	62

Աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ)/ Աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) ոլորտի տերմինաբանություն	65
---	----



ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուղեցույցի նպատակը

Աղետների ռիսկերի կառավարման և աղետի դեպքում քաղաքացիների կյանքը պաշտպանելու գործում ՋԼՄ-ներն առաջնային, իսկ ճշգրիտ տեղեկատվությունը՝ վճռորոշ դեր ունեն:

Հեռուստատեսությունը, ռադիոն, էլեկտրոնային լրատվամիջոցները լայն սփռման շնորհիվ արագ ու համաժամանակյա հաղորդելու մեծ հնարավորություն ունեն, ուստի շատ կարևոր է, որ հեռարձակողներն աղետի դեպքում նպատակային և արդյունավետ գործելուն պատրաստ լինեն: Տպագիր մամուլի դերը ևս կարևոր է. մարդիկ հակված են թերթերի տեղեկատվությունն ընկալել որպես խորհուրդ հուսալի աղբյուրից:

Լրատվամիջոցները տեղեկացնելուց բացի, նաև հանրային իրազեկման կարևորագույն գործիք են, ուստի կրթելու և աղետներին պատրաստ լինելու, դրանց դիմակայելու համար գիտելիք փոխանցելու դեր ունեն, և կարող են մասնակցել աղետների կառավարման քա-

ղաքականության մշակմանը՝ վերլուծելով երկրի խոցելի կողմերը և կարողությունները բարձրացնելու ուղիները

ԶԼՄ ներկայացուցիչները կարող են ավելին անել, քան պարզապես տեղեկացնել աղետների մասին՝ ուսումնասիրելով աղետների հիմնական պատճառները և դրանց սոցիալական մասշտաբները, էապես փոխել աղետների նկատմամբ մարդկանց մտածողությունը և դրանց դեպքում հնարավոր վարքագիծը:

Հայաստանին բնորոշ աղետները, մասնավորապես 1988 թ. երկրաշարժը, հանրային առողջությանը սպառնացող վտանգների ու սպառնալիքների, սողանքների ու հրդեհների լուսաբանման փորձը առաջին պլան են մղել այն կանոնների ու սկզբունքների կարևորությունը, որոնց պետք է հետևեն լրագրողներն իրենց առաքելությունը կատարելիս:

Այս ուղեցույցի նպատակն է լրատվամիջոցներին փոխանցել աղետների ռիսկերի կառավարման վերաբերյալ հիմնական գիտելիքները, որպեսզի անհրաժեշտ պահին նրանք ճիշտ կազմակերպեն լուսաբանման իրենց աշխատանքը, և օգնեն հանրությանը և երկրին՝ աղետից դուրս գալ նվազագույն կորուստներով: Այն օգտակար կարող է լինել ԶԼՄ ներկայացուցիչների, լրատվական ծառայությունների աշխատակիցների, տեղեկատվություն տնօրինողների և արտակարգ իրավիճակներում տեղեկատվության տրամադրման համար պատասխանատուների, բուհերի ժուռնալիստիկայի ֆակուլտետների ուսանողների համար:

Արդյունավետ լուսաբանմամբ են պայմանավորված.

- մարդկանց իրազեկվածությունը,
- հնարավոր վրանգներին պատրաստ լինելն ու արդյունավետ որոշումներ կայացնելը,
- հասարակական համագործակցության մեխանիզմների արդյունավետ կիրառումը,
- ստեղծված արտակարգ իրավիճակներից անվնաս կամ նվազագույն վնասներով դուրս գալը:

Սա է պատճառը, որ տեղեկություններ հավաքելու, տրամադրելու, փոխանցելու գործառույթներում ընդգրկված բոլոր օղակների աշխատանքների հիմքում պետք է դրված լինի հետևյալ խնդիրների կատարումը.

- ապահովել արտակարգ իրավիճակներին վերաբերող տեղեկատվության տրամադրումը,

- պատրաստ լինել պատասխանելու հասարակությանը հետաքրքրող բոլոր հարցերին,
- տրված տեղեկատվությունը պետք է մղի սթամպիության, անհրաժեշտ գործողությունների իրականացման, բացառի խուճապը,
- մարդկանց մոտ անվտանգության զգացում առաջացնի, իսկ վտանգների դեպքում՝ հաղթահարելիության:

Արտակարգ իրավիճակները լուսաբանող լրագրողների համար առաջարկվող սկզբունքներից շատերը նույնն են՝ անկախ արտակարգ իրավիճակի տեսակից, սակայն կան նաև առանձնահատկություններ, որոնց կանդրադառնանք ստորև:



ԳԼՈՒԽ 1

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1.1. Արտակարգ իրավիճակների լուսաբանման կարևորությունը

Լրատվամիջոցները կարևոր դեր են կատարում աղետների ռիսկի կառավարման գործընթացում: Աղետների ընթացքում քաղաքացիների կյանքը պաշտպանելու գործում մեծ նշանակություն ունի ճշգրիտ տեղեկատվությունը:

Հեռուստատեսությունը, ռադիոն և համացանցն ունեն վնասի և անվտանգության ապահովման վերաբերյալ արագ ու համաժամանակյա լայն սփռմամբ և մեծ թվով մարդկանց տեղեկատվության հաղորդման մեծ հնարավորություն: Այս հնարավորությունը նպատակային և արդյունավետ օգտագործելու համար ՋԼՄ-ները պետք է պատրաստ լինեն արձագանքելու աղետից անմիջապես հետո:

Չպետք է անտեսվի նաև տպագիր մամուլի դերը, հատկապես ավելի բացատրական, գիտելիքներ պարունակող տեղեկատվության

դեպքում: Լրատվամիջոցների կարևոր գործառույթներից է ինչպես հանրությանը տեղեկացնելը, այնպես էլ՝ կրթելն ու համապատասխան գիտելիքներով զինելը՝ նպաստելով աղետների կանխարգելմանն ու ռիսկերի նվազեցմանը: Լրատվամիջոցները կարող են էապես փոխել աղետների նկատմամբ մարդկանց մտածելակերպը և վարվելակերպը: Լրագրողները, մեկնաբանները, խմբագիրները, հեռարձակողները և զանգվածային լրատվության բոլոր մասնակիցները կարող են ավելին անել, քան պարզապես տեղեկացնել և իրազեկել աղետների մասին: Ուսումնասիրելով աղետների հիմնական պատճառները և դրանց սոցիալ-տնտեսական հետևանքները՝ լրատվամիջոցները կարող են օգնել մարդկանց ավելի լավ հասկանալ, թե ինչն է իրենց խոցելի դարձնում և ինչ կարող են անել աղետներին դիմակայելու իրենց կարողությունները բարձրացնելու համար:

Ուղեցույցը հիմնված է տեսական ու գործնական ուսումնասիրությունների, ինչպես նաև տեղական և միջազգային փորձի վրա:

1.2 Արտակարգ իրավիճակների լուսաբանման սկզբունքները

Ցանկալի է, որ արտակարգ իրավիճակների (ԱԻ) լուսաբանման յուրտում ներգրավված ՁԼՄ-ները խուսափեն սենսացիոն լուրերից կամ լուրերը սենսացիա դարձնելուց, սոցիալական տարանջատումից, ինչպես նաև հանրությանը հաղորդեն օբյեկտիվ և օգտակար տեղեկատվություն:

Նախքան աղետի գոտի մեկնելը, լրագրողը պարտավոր է.

- լինել պատրաստված և ունենալ աղետ լուսաբանելու վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ,
- ուսումնասիրել աղետի այն տեսակը, որը լուսաբանվելու է, այսինքն՝ տիրապետել տվյալ աղետի առանձնահատկությունների մասին տեղեկատվությանը:

Աղետի գոտում աշխատելիս լրագրողը պարտավոր է.

- հետևել համապատասխան օրենքներին և կանոններին,
- հետևել անվտանգության կանոններին և աշխատանքի ընթացքում չվնասել ու չվտանգել իր և մյուսների կյանքը և առողջությունը,
- հետևել դեպքի վայրում աղետը կառավարող մարմնի ցուցումներին, եթե դրանք չեն հակասում օրենսդրությանը և բխում են ստեղծված իրավիճակի վտանգավորությունից,

- լինել հնարավորինս անկողմնակալ և օպերատիվ,
- յուրաքանչյուր տեղեկություն մատուցել ճիշտ ժամանակին, հաղորդել միայն հավաստի տեղեկատվություն,
- օգնել, որ մարդիկ ճիշտ պատկերացում կազմեն աղետի ծավալի մասին,
- ներկայացնել ոչ միայն աղետն ու դրա հետևանքները, աղետի գոտում կատարվող աշխատանքները, այլև այն մարդկանց կյանքն ու ճակատագրերը, որոնք տուժել են տվյալ աղետից,
- աղետի ճշգրիտ պատկերը ներկայացնելու համար օգտագործել համապատասխան բառապաշար, իսկ մասնագիտական տերմինները կիրառել պարզ և հանրամատչելի բացատրությամբ,
- պահպանել մասնագիտական էթիկան, որոշում կայացնելիս հաշվի առնել դրա համապատասխանությունը հասարակության շրջանում ընդունված վարքականոններին, պահպանել կարգապահություն, արտահայտվելիս և գործելիս հարգել այլոց վիշտը և հրապարակումներով չվնասել կամ չվիրավորել տուժածներին և նրանց մտերիմներին,
- աշխատանքի ընթացքում, ինչպես նաև դրանից հետո թույլ չտալ այնպիսի արտահայտություններ և չանել այնպիսի գործողություններ, որոնք բացասական ազդեցություն կունենան լրատվամիջոցի համբավի, պատվի և վստահության վրա,
- պատշաճ կերպով պահպանել լրագրողական գործունեության ընթացքում հայթայթված գաղտնի տեղեկությունները, չօգտագործել դրանք անձնական շահերից ելնելով:

1.3 Աղետների ռիսկերի նվազեցման և կառավարման վերաբերյալ պահանջվող գիտելիքներ

Աղետների կանխարգելումը գիտելիք, ունակություն, կարողություն և փորձ է՝ կյանքեր, գույք, իրավիճակ փրկելու և մարդկանց պաշտպանելու: Աղետի վտանգը չի կարող վերահսկվել մարդու կողմից, բայց վտանգի հետևանքով առաջացող ռիսկերն ու վնասները կարող են կառավարվել և կրճատվել:

ԶԼՄ-ներից ակնկալվում է աջակցություն, որպեսզի քաղաքացիներն իմանան աղետի դեպքում առաջացող վտանգները, նախապատրաստվեն, իրավիճակից ելնելով՝ ինքնուրույն որոշում կայացնեն և

ապահովեն սեփական անվտանգությունը, աղետի ժամանակ և դրանից հետո կարողանան իրենց ներդրումն ունենալ այլ անձանց, հասարակության և տարածաշրջանի անվտանգության հարցում, ինչպես նաև հասկանան բնական աղետների առաջացման մեխանիզմները, ունենան տարրական գիտելիքներ տարածաշրջանի շրջակա միջավայրի, աղետների և դրանց ռիսկի նվազեցման վերաբերյալ:

Այս առումով լրատվամիջոցներից և լրագրողներից պահանջվում է հասկանալ աղետի ցիկլի փուլերը, որոնք աղետի ռիսկի նվազեցման (ԱՌՆ) հիմքն են, իմանալ աղետի վերաբերյալ եղած հասկացությունները, և նյութերը պատրաստել այդ գիտելիքների հիման վրա:



ԳԼՈՒԽ 2

ԱՂԵՏՆԵՐԻ ԼՈՒՍԱՔԱՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Աղետների լուսաբանումը և դրա ազդեցությունը հասարակության վրա

Աղետների ժամանակ լրատվամիջոցներն ու լրագրողները հիմնական երեք սոցիալական դեր են կատարում.

1. աղետի հասցրած վնասների մեղմացում՝ արագ լուսաբանման միջոցով,
2. խոշոր վնասների և ռիսկի տակ գտնվող մարդկանց վերաբերյալ վաղ լուսաբանումը կօգնի ոստիկանությանը, հրշեջներին, փրկարարական ուժերին արագ հասնել աղետի գոտի: Ակնկալվում է, որ նրանք արձագանքողների և տուժածների միջև հաղորդակցություն կապահովեն:
3. երկարաժամկետ աջակցություն տուժածներին՝ մինչև ամբողջական վերականգնումը՝ շարունակական լուսաբանման միջոցով:

Խոշոր բնական աղետների պես կյանքին սպառնացող ճգնաժամերի դեպքում հասարակության հետ հաղորդակցությունը կարող է դառնալ կյանքի ու մահվան հարց: Աղետների դեպքում լրատվամիջոցները հաճախ քաղաքացիների համար տեղեկատվության հիմնական աղբյուր են: Հետևաբար, լրատվամիջոցները կարևոր դեր ունեն կյանքեր փրկելու և երկրորդական աղետներ կանխելու գործում՝ տրամադրելով ճշգրիտ տեղեկատվություն:

Աղետի հնարավորության մասին իրազեկելու պարագայում վտանգներից ու վնասներից խուսափելու համար լրատվամիջոցները կարող են նախազգուշացնել քաղաքացիներին՝ օպերատիվ կերպով հուսալի տեղեկատվություն փոխանցելու միջոցով: Այս դեպքում ամենակարևորն այն բնակիչների մոտ ճգնաժամի զգացողություն առաջացնելն է, որոնք չեն պատկերացնում, որ կարող են աղետի ներգործության ենթարկվել կամ զրկվել սեփական կյանքից: Հեռարձակող լրատվամիջոցները, հատկապես՝ առցանց ՋԼՄ-ները և ռադիոն կարող են ռիսկի տակ գտնվող մարդկանց ժամանակին մատուցել հստակ և համապարփակ հաղորդագրություն, որը կպարունակի մարդկանց հուզող մի շարք հարցերի պատասխաններ:

Ի՞նչ է տեղի ունեցել:

Ի՞նչ կարող է պատահել:

Որտեղ է ապահով:

Ո՞ւմ հետ պետք է կապ հաստատեն տուժողները:

Ի՞նչ պետք է նրանք անեն:

Ի՞նչ չպետք է անեն:

Մարդիկ ցանկանում են ստանալ բազմաթիվ հարցերի պատասխաններ: Ճիշտ ժամանակին իրազեկումը, տեղեկատվության տարածումը կարող են փրկել կյանքեր, նվազեցնել վնասները և նպաստել փրկարարական ու վերականգնողական աշխատանքների սահուն ընթացքին:

2.2 Լրատվության առանձնահատկություններն և արտակարգ իրավիճակներում

- 1) **Լրատվական ենթակառուցվածքների և հանրային հաստատությունների մեղքով լրատվության ճգնաժամի առաջացում**
Տեղեկատվության հավաքագրումը և հրապարակումն անհնարին են դառնում, երբ ընդհատվում է լրատվական ենթակառուցվածքների ու

հանրային հաստատությունների հետ կապը: Նման դեպքերում լուսաբանում իրականացնելիս կարող են խոչընդոտներ առաջանալ: Հետևաբար, լրատվամիջոցները և լրագրողները պետք է նախապես մտածեն, թե ինչպե՞ս աշխատել վատթարագույն սցենարի դեպքում, ինչպիսի՞ն կարող են լինել կապի ենթակառուցվածքների վնասման արդյունքում լուսաբանման սահմանափակումները՝ ճանապարհների արգելափակումը, վառելիքի պակասը, ինտերնետի բացակայությունը և այլն: Առաջնային խնդիրը լրատվական բացը հաղթահարելն է:

2) Աղետների լուսաբանման ազդեցությունը հոգեկան առողջության վրա

Բնական աղետները լայնորեն լուսաբանվում են լրատվամիջոցների կողմից: Դրանք հաճախ ներառում են պատկերներ, տեսանյութեր և նկարագրություններ մահվան, վնասվածքների և ավերածությունների մասին: Աղետների լուսաբանումն անհատական հոգեբանական ազդեցություն է ունենում: Լրատվամիջոցները պետք է հասկանան, որ լուսաբանումը երբեմն հոգեբանական սթրես է առաջացնում ինչպես երեխաների, այնպես էլ մեծահասակների մոտ, մինչդեռ աղետների մասին տեղեկատվությունն օգտակար է իրազեկման համար: Լրատվական նյութերում օգտագործվող պատկերներն ու տեսանյութերը պետք է ընտրվեն և խմբագրվեն՝ հաշվի առնելով վերոնշյալը: Լրագրողական էթիկան այստեղ կարևոր գործոն է:

2.3 Լրատվամիջոցների դերն աղետների ժամանակ

Աղետների լուսաբանման ժամանակ լրատվամիջոցների դերը տարբեր է լինում՝ կախված լրատվամիջոցի տեսակից: Ստորև բերված են լրատվամիջոցներից յուրաքանչյուրի առանձնահատկությունները:

Լրատվամիջոցի տեսակը	Առանձնահատկությունը
Հեռուստատեսություն	<ul style="list-style-type: none"> • Հաղորդակցություն իրական ժամանակում <p>Հեռուստաընկերությունները կարող են հանրության լայն զանգվածներին անմիջապես տրամադրել աղետների մասին տեղեկատվություն, այդ թվում՝ եղանակի մասին նախազգուշացումներ, աղետների վտանգը,</p>

	<p>տարահանման վերաբերյալ հորդորներ և այլ տեղեկություններ այն տարածքներում, որտեղ տեղեկատվություն ստացողը պետք է որոշում կայացնի և քայլեր ձեռնարկի այն ստանալուց անմիջապես հետո:</p> <p>• Տեսողական տեղեկատվություն Տեսողական տեղեկատվությունը կարող է օգնել մարդկանց ավելի հստակ պատկերացնել առաջիկա ճգնաժամային իրավիճակը: Բացի այդ, հեռուստաընկերություններն ունեն հնարավորություն նաև տեքստային տեղեկատվություն պատկերել էկրանին:</p> <p>• Տեսողական տեղեկատվության միջոցով գործողությունների խթանում Հեռուստաընկերությունները կարող են ներկայացնել աղետի ընդհանուր պատկերը, որը կարող է էական դեր խաղալ փրկարարական թիմերի, նվիրատվությունների և կամավորների մոբիլիզացման, ինչպես նաև քաղաքականություն մշակողների կողմից գործողությունների որոշման հարցում:</p>
Ռադիո	<p>• Մանրամասն տեղեկատվություն համայնքներից Տեղական ռադիոընկերությունները կարող են ավելի մանրամասն տեղեկատվություն տրամադրել, քան համազգայինները: Բացի այդ, ռադիոկայանները կարող են տրամադրել ճշգրիտ տեղեկատվություն, որն անհրաժեշտ է աղետից հետո համայնքների համար, ինչպիսին են անվտանգության, տարահանման և ապաստարանների վերաբերյալ տեղեկությունները:</p> <p>• Տեղեկատվության երկկողմանի հաղորդում Ռադիոն հնարավորություն է տալիս իրականացնել տեղեկատվության ինտերակտիվ փոխանցում՝ ներառելով ունկնդիրներից ստացված տեղեկատվությունը: Աղետի դեպքում, ռադիոյի միջոցով լսելով ունկնդիրների ձայնը, հնարավոր է ընկալել աղետի իրական վիճակը յուրաքանչյուր տարածքում, և հեռավոր տարածքներում ապրող ունկնդիրները կարող են տեղեկանալ իրավիճակի մասին:</p>

	<p>• Շարժունակություն Ի տարբերություն հեռուստացույցի՝ ռադիոընդունիչը կարող է լիցքավորվել նույնիսկ էլեկտրաէներգիայի անջատման ժամանակ՝ մարտկոցների, արևային պանելների միջոցով, այն կարող է նաև շարժական լինել կամ տեղադրված ավտոմեքենայի մեջ: Ռադիոկայաններն ավելի արդյունավետ են աղետների կանխարգելման, ինչպես նաև տեղեկատվության հավաքագրման համար:</p>
<p>Մամուլ (թերթեր, ամսագրեր և այլն)</p>	<p>• Մանրամասն լուսաբանում և վստահելիություն Տպագիր խոսքը հաճախ ավելի ազդեցիկ է բնակչության որոշ խմբերի համար, հատկապես՝ մեծահասակների, որոնք սովոր են վստահել մամուլին: Բացի այդ, մամուլը կարող է մանրամասն ներկայացնել այս կամ այն աղետի դեպքում բնակչության գործողությունների հերթականությունը:</p>
<p>Համացանց</p>	<p>• Արագություն և արդյունավետություն Օպերատիվության շնորհիվ համացանցը (առցանց ՋԼՄ-ները և սոցիալական ցանցերը) կարող է իրականացնել թե՛ իրազեկման, թե՛ հաղորդակցության, և թե՛ տեղեկատվական գործառույթ: Սակայն տվյալ դեպքում, ինչպես և հեռուստատեսության պարագայում, առկա է անհասանելիության վտանգը, երբ բջջային կապի կայանները և մալուխները շարքից դուրս են գալիս:</p> <p>• Կեղծ լուրերի ներուժ Կա նաև ապատեղեկատվության սպառնալիք, քանզի արտակարգ իրավիճակում գտնվող մարդուն շատ դժվար է տարբերակել տեղեկատվության հավաստի և ապատեղեկացնող աղբյուրները:</p>



ԳԼՈՒԽ 3

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ

3.1 Աղետների կառավարման ցիկլը և աղետների վերաբերյալ տեղեկատվության պահանջարկը

Աղետների ռիսկերի կառավարումը ենթադրում է պետական և տեղական կառավարման մարմինների, տարբեր կազմակերպությունների գործնական հմտությունների և կարողությունների համակարգված գործընթաց, որը միտված է վտանգների բացասական ազդեցությունների և աղետների ռիսկի նվազեցման ռազմավարությունների և քաղաքականության իրականացմանը:

Աղետների ռիսկերի կառավարման ռազմավարությունը պետք է ներառի հետևյալ փուլերը.

1. կանխարգելում,
2. նախապատրաստում,
3. արձագանք աղետի ժամանակ,
4. վերականգնում,
5. վերակառուցում:

Աղետների ռիսկերի կառավարման վերոնշյալ բոլոր գործընթացների կարևոր մասն են բնական տարերային վտանգների բացահայտումը և գնահատումը: Այս մասի բաղադրամասերն են՝ տարերային աղետներին նախորդող բնական գործընթացները (բացառությամբ երկրաշարժերի) և դրանցով հարուցված վնասակար հետևանքների մշտադիտարկումը (մոնիթորինգը) ու կանխատեսումը (բնական աղետների ռիսկերի գնահատում հավանականության մեթոդով և հնարավոր արտակարգ իրավիճակների վերլուծություն), ինչպես նաև աղետների զարգացման հնարավոր սցենարների մշակումը, դրանց ռիսկերի սահմանումը և խոցելիության գնահատումը:

Պատրաստվածության բաղադրամասերն են՝ բնակչության նախապատրաստում և գիտելիքների մակարդակի բարձրացում, ենթակառուցվածքների պաշտպանության միջոցառումների կազմակերպում, վաղ ծանուցման և բնակչության պաշտպանության (տարահանում, պաշտպանության անհատական և կոլեկտիվ աշխատանքների կիրառում) նպատակով նախնական ապահովման կազմակերպում, բնական աղետներին արձագանքելու ծրագիր, որի բաղադրամասերն են՝ բնական աղետներով հարուցված հետևանքների վերացում և տարերային աղետի օջախում փրկված բնակչության կենսական ապահովման կազմակերպում:

Աշխարհի զարգացած շատ երկրներ արտակարգ իրավիճակների կառավարման գործընթացում վաղուց արդեն հասարակական լրատվության կազմակերպումն ամրակայել են ընդհանուր պլանավորման հիմքում: Ճշգրիտ ու հուսալի տեղեկատվությունն աղետների ու ճգնաժամերի արդյունավետ կառավարման անկյունաքարն է:

Շատ փորձագետներ մեղիա պլանավորումը դիտարկում են որպես աղետներին նախապատրաստված լինելու կարևորագույն նախապայման: Նախապատրաստման և պլանավորման արդյունավետությունը հիմք է, որ արձագանքման և վերականգնման փուլերում լրատվությունը գործի միևնույն արդյունավետությամբ:

Արտակարգ իրավիճակների կանխարգելման, դրանց հետևանքների ու համայնքների խոցելիության նվազեցման հնարավորությունը մեծ է, եթե բնակչությունն ու պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններն իրազեկված են ու պատրաստված:

Ուստի այստեղ հարկ է իմանալ արտակարգ իրավիճակների դասակարգումը: Ըստ դասակարգման՝ արտակարգ իրավիճակներն ամփոփված են հետևյալ աղյուսակում.

<i>Բնական (տարերային)</i>		
երկրաշարժ, հրաբուխ, սողանք, քարաթափում, սելավ, ջրհեղեղ, ջրածածկում	փոթորիկ, պտտահողմ, երաշտ, անտառային հրդեհ, տևական անձրև, կարկուտ	վնաս սառցակալումից, ուժեղ ձյուն, ուժեղ ձնաբուք
<i>Տեխնածին</i>		
տրանսպորտային վթար, ավիավթար, գնացքի (նաև մետրոպոլիտենի) վթար, հրդեհ, պայթյուն (շենքում, շինությունում, սննդի կամ արդյունաբերության օբյեկտում, տրանսպորտում, հորանում, փորվածքում, մետրոպոլիտենում)	վթար ուժեղ ներգործող թունավոր նյութերի արտանետմամբ, վթար ռադիոակտիվ նյութերի արտանետմամբ (արտանետման վտանգով), վթար կենսաբանական վտանգավոր նյութերի արտանետմամբ, շենքի, շինության հանկարծակի փլուզում, հիդրոդինամիկական վթար (ամբարտակի և պոչամբարի ճեղքում)	
<i>Վարակիչ հիվանդություններ (համաճարակներ)</i>		
մարդկանց (էպիդեմիա), գյուղատնտեսական կենդանիների (էպիդեմիա), գյուղատնտեսական բույսերի (վնասատուներ և հիվանդություններ)		

Աղետների ռիսկի կառավարման հայեցակարգը, լինելով տեխնիկական ու գիտական, հաճախ հասարակության կողմից դժվար ընկալելի է: Երբեմն նույնքան դժվար է հասկանալ թեմայի վերաբերյալ գրված հոդվածները: Այդ իսկ պատճառով լրագրողները պետք է ձևավորեն աղետների և աղետների ռիսկի նվազեցման վերաբերյալ

սեփական ընկալումները՝ հասարակությանը տեղեկատվությունն ավելի հասկանալի ձևով փոխանցելու համար:

Այս ձեռնարկում հիմնականում անդրադառնում ենք Հայաստանին սպառնացող պոտենցիալ ամենավտանգավոր բնական աղետներին՝ երկրաշարժերին, սողանքներին և անտառային հրդեհներին:

3.2 Երկրաշարժ

Ռիսկի գործոններ

Երկրաշարժի ռիսկի վրա ազդում են բազմաթիվ գործոններ, օրինակ՝

- **Բնակչության խտությունը.** որքան շատ մարդ է ապրում երկրաշարժավտանգ գոտիներում, այնքան ավելի մեծ սեյսմիկ ռիսկ է նրանց սպառնում: Աշխարհի 10 ամենաբնակեցված քաղաքներից 8-ը ենթարկվում են երկրաշարժի վտանգի և գտնվում զարգացող երկրներում: Աշխարհում երկրաշարժերի մեծ մասը տեղի է ունենում Խաղաղ օվկիանոսի շրջակայքում: Դրանցից շատերը տեղի են ունենում Ասիայում, որտեղ ապրում է աշխարհի բնակչության երկու երրորդը:
- **Վատ կառուցված և սեյսմակայություն չունեցող շենքեր.** սեյսմակայություն չունեցող և վատ կառուցված շենքերը չեն կարողանում դիմակայել ուժեղ ցնցումներին և փլուզվում են՝ պատճառ դառնալով բազմաթիվ զոհերի և առաջացնելով սոցիալ-տնտեսական մեծ վնասներ:

Խոցելի փարածքներ

Երկրաշարժավտանգ գոտիներում գտնվող քաղաքները, խիտ բնակեցված հին և շինարարական նորմերին չհամապատասխանող շենքերում ապրող բնակիչները:

Աղետների ռիսկի նվազեցման միջոցառումներ

- Երկրաշարժավտանգ գոտիներում հողօգտագործման պլանավորման և քաղաքաշինական ռազմավարության մեջ սեյսմիկ ռիսկի ինտեգրում:
- Շինարարական նորմերի ապահովում երկրաշարժավտանգ գոտիներում մարդկանց մեծ խտությամբ ենթակառուցվածքներում (հիվանդանոցներ, դպրոցներ, բնակելի շենքեր, գործարաններ)՝ շենքերի փլուզումը կանխելու և երկրաշարժից հետո հիմնական ծառայությունների (առողջապահություն, կրթություն, տրանսպորտ, կոմունալ և սանիտարական ծառայություններ և այլն) շարունակականությունն ապահովելու նպատակով:
- Նախազգուշացման համակարգի առկայություն, որն առնվազն կկարողանա անջատել գազի և էլեկտրաէներգիայի մատակարարումը՝ նվազեցնելով հրդեհի վտանգը (1995 թ–ին Ճապոնիայի Կոբե քաղաքում տեղի ունեցած երկրաշարժի արդյունքում բռնկված հրդեհների հետևանքով բազմաթիվ մարդիկ զոհվեցին):
- Դպրոցներում և աշխատավայրերում շենքերի անվտանգության կարևորության վերաբերյալ վերապատրաստման ու պատրաստվածության բարձրացման ծրագրերի միջոցով կրթվածության և իրազեկվածության բարձրացում:
- Արտակարգ իրավիճակներում գոյատևման համար անհրաժեշտ պարագաների նախապատրաստում, ներառյալ երեք օրվա համար ջուր/սնունդ, շարժական ռադիո, էլեկտրական լապտեր, առաջին օգնության հավաքածու:
- Կահույքի, դարակների, պահարանների ամրացում, պատուհանների ապակիների պաշտպանում:

**Երկրաշարժերի վերաբերյալ քաղաքացիներին
անհրաժեշտ տեղեկատվությունը**

Տեղեկատվության տեսակ	Բովանդակություն
Աղետից անմիջապես հետո	
Տարահանման հրաման	Շենքերի փլուզումների տարածքներ Հրդեհի տարածք և հրդեհի տարածման ուղղություն
Իսպիանումների կանխար- գելման կոչ	Գազի և վտանգավոր այլ նյութերի ար- տահոսքի տարածքներ Տեղեկատվություն հետցնցումների վե- րաբերյալ
Աղետից հետո՝ 1 ժամից մինչև 3 օր	
Տարածաշրջանին պատ- ճառված վնաս	Շենքերին հասցված վնաս Հրդեհից առաջացած վնաս Կենսապահովման երթուղիներին պատ- ճառված վնասը Տեղեկատվություն զոհերի և վիրավոր- ների մասին
	Տեղեկատվություն անհետ կորածների մասին Տեղեկատվություն որոնողափրկարարա- կան աշխատանքների մասին
Տարահանում	Տարահանման վայրերի տեղակայումը և կարգավիճակը Տեղեկատվություն տարահանման եր- թուղիների մասին
Բուժօգնություն	Հրատապ բուժօգնության կայանների ստեղծում Տեղեկատվություն բուժհաստատություն- ների մասին (տեղակայում, հիվանդներ ընդունելուն պատրաստ լինել և այլն)
Ջրամատակարարում	Ջրամատակարարման գործողություն- ների ընթացքը (ջրի կայաններ, ջրի ցիս- տոններ, ջրհորեր և այլն)

Աղետից հեղո՝ 1 օրից մինչև 1 շաբաթ

Առաջին անհրաժեշտության պարագաներ	Տեղեկատվություն առաջին անհրաժեշտության պարագաների գնման և բաշխման վերաբերյալ
Կեղտաջրերի և թափոնների մշակում	Տեղեկատվություն կեղտաջրերի և աղբի մաքրման վերաբերյալ Աղետների ժամանակ կիրառվող զուգարանների տեղադրում
Երթևեկություն	Ճանապարհների վերականգնման ընթացքը Երթևեկության վերահսկման հետ կապված իրավիճակը Տեղեկատվություն հասարակական տրանսպորտի վերաբերյալ
Կյանքի վերականգնում	Տեղեկատվություն կենսապահովման ուղիների վերականգնման վերաբերյալ Տեղեկատվություն ժամանակավոր կացարանների վերաբերյալ Տեղեկատվություն օգնության բաշխման վերաբերյալ

Օգտակար հղումներ

- Երկրաշարժեր և մեգապոլիսներ նախաձեռնություն – www.emi-megacities.org/home
- Արտակարգ դեպքերի տվյալների շտեմարան (EM-DAT) – www.em-dat.net
- PreventionWeb – www.preventionweb.net/english/hazards/earthquake
- ԱՄՆԵԾ, Սեյսմիկ վտանգի ծրագիր – <http://earthquake.usgs.gov/learn/faqs>

3.3 Սողանք

Ընդհանուր նկարագիր

Հայաստանում առավել հաճախ հանդիպող սողանքներն են՝

Լանջի փլուզում	Լանջային փլուզումը տեղի է ունենում ծանրության ուժի ազդեցության տակ տարբեր պատճառներով՝ ջերմաստիճանի կտրուկ փոփոխությունների ազդեցությունից, սառչելիս ջրի ընդարձակումից, երկրաշարժի ժամանակ:
Քարաթափում	Բեկորների կուտակում, որն առաջանում է լեռնային ապարների հողմահարման ու քայքայման ժամանակ լեռների ստորոտներում ու լանջերի վրա: Սովորաբար քարաթափումները ծածկում են լեռնալանջերի ստորին, երբեմն էլ՝ միջին մասը:

Ռիսկի գործոններ

Բնակչության աճը, արագ ուրբանիզացիան և շրջակա միջավայրի քայքայումը (անտառահատումները, հողի ու լանջերի ոչ ճիշտ շահագործումը) մեծացնում են սողանքի ռիսկը և խոցելի դարձնում մարդկանց սողանքի վտանգի հանդեպ: Բնակչության բարձր խտությունը, ուժեղ տեղումները և հողօգտագործման արագ փոփոխությունները մեծացնում են լանջերի անկայունությունը:

Խոցելի տարածքներ

Քաղաքային տարածքներն ամենախոցելին են ռիսկի ենթարկվող մեծ թվով մարդկանց պատճառով: Անկայուն լանջերի և կտրուկ տեղանքների վրա ապրող մարդիկ ամենաշատն են ռիսկի ենթարկվում: Նախկինում սողանքից տուժած տարածքները և անկայուն լանջերի երկայնքով տեղակայված վայրերը նույնպես սողանքավտանգ են:

Աղետի ռիսկի նվազեցման միջոցառումներ

- Ունենալ վտանգների քարտեզ՝ սողանքի ռիսկերը հստակեցնելու համար:
- Տեղում ունենալ մոնիթորինգի համակարգ՝ սողանքը դիտարկելու և դրա առաջացման դեպքում տագնապի ազդանշան արձակելու համար:
- Ինտեգրել սողանքի ռիսկի գնահատումը քաղաքային պլանավորման ռազմավարություններում:
- Մշակել շինարարական նոր նորմեր և ստանդարտներ՝ շեշտը դնելով շինանյութերի կիրառման վրա՝ սողանքների նկատմամբ ենթակառուցվածքների դիմացկունությունը բարձրացնելու նպատակով:
- Իրականացնել կառուցվածքային միջոցառումներ, օրինակ՝ վտանգավոր լանջերի կայունացման ապահովում, գետի պաշտպանության վերանախագծում՝ լանջի էրոզիան նվազեցնելու և աշխարհագրական հատկությունները ձևափոխելու նպատակով:
- Ապահովել լանջերի ստորոտին գտնվող քաղաքները, գյուղերը և թունելները բետոնե հենապատերով և պաշտպանությամբ:
- Ամրացնել գետի պաշտպանությունը՝ տեղադրելով սահմանափակ բարձրությամբ փայտե պատվարներ այն հուններում, որտեղ հնարավոր են սելավներ:
- Բարելավել ջրահեռացումը՝ լանջերը կայունացնելու համար կառուցելով թունելներ և խրամուղիներ:
- Պաշտպանել անտառածածկույթը և արգելել ծառահատումը:
- Կրթել մարդկանց և բարձրացնել իրազեկվածությունը սողանքի ռիսկի վերաբերյալ:
- Մշակել վաղ ազդարարման համակարգ տեղումների մակարդակը չափելու համար, պարբերաբար վարժանքներ անցկացնել, այդ թվում՝ տարահանման, և ապահովել դրանց համայնքի բնակչության մասնակցությունը:
- Ունենալ աղետի արձագանքման պլան ազգային և տեղական մակարդակում, որպեսզի մարդիկ կարողանան ժամանակին տարահանվել:

**Սողանքների վերաբերյալ քաղաքացիներին
անհրաժեշտ տեղեկատվությունը**

Տեղեկատվության տեսակ	Բովանդակություն
Աղետից առաջ	
Սողանքային վտանգավոր տարածք	Վտանգավոր տարածքների քարտեզ Ապաստարաններ և տարահանման երթուղիներ
Կանխատեսումներ և նախազգուշացումներ	Տեղումների կանխատեսումներ և սողանքի մասին նախազգուշացում
Տարահանման հրաման	Տարահանման հրամաններ և տանը գտնվողների վարքականոններ
Աղետից անմիջապես հետո	
Տարահանման հրաման էսափանումների կանխարգելման կոչ	Շենքերի փլուզումների տարածքներ Գազի և վտանգավոր այլ նյութերի արտահոսքի տարածքներ Հետագա գրունտային շարժերի դեպքում կիրառվող տեղեկատվություն
Աղետից հետո՝ 1 ժամից մինչև 3 օր	
Տարածաշրջանին պատճառված վնաս	Շենքերին հասցված վնաս Կենսապահովման երթուղիներին պատճառված վնաս Տեղեկատվություն զոհերի և վիրավորների մասին
	Տեղեկատվություն անհետ կորածների մասին Տեղեկատվություն որոնողափրկարարական աշխատանքների մասին
Տարահանում	Տարահանման վայրերի տեղակայումը և կարգավիճակը Տեղեկատվություն տարահանման երթուղիների մասին

Բուժօգնություն	Հրատապ բուժօգնության կայանների ստեղծում Տեղեկատվություն բուժհաստատությունների մասին (տեղակայման վայր, հիվանդներ ընդունելուն պատրաստ լինելը և այլն)
Ջրամատակարարում	Ջրամատակարարման գործողությունների ընթացքը (ջրի կայաններ, ջրի ցիստեռներ, տարահանման վայրեր, ջրիորեր և այլն)
Աղեպից հեղո՝ 1 օրից մինչև 1 շաբաթ	
Առաջին անհրաժեշտության պարագաներ	Տեղեկատվություն առաջին անհրաժեշտության պարագաների գնման և բաշխման վերաբերյալ
Կեղտաջրերի և թափոնների մշակում	Տեղեկատվություն կեղտաջրերի և աղբի մաքրման վերաբերյալ Աղետների ժամանակ կիրառվող զուգարանների տեղադրում
Երթևեկություն	Ճանապարհների վերականգնման ընթացքը Երթևեկության վերահսկման հետ կապված իրավիճակը Տեղեկատվություն հասարակական տրանսպորտի վերաբերյալ
Կյանքի վերականգնում	Տեղեկատվություն կենսապահովման ուղիների վերականգնման վերաբերյալ Տեղեկատվություն ժամանակավոր կացարանների վերաբերյալ Տեղեկատվություն հակասողանքային միջոցառումների վերաբերյալ Տեղեկատվություն օգնության բաշխման վերաբերյալ

Օգտակար հղումներ

- Արտակարգ դեպքերի տվյալների բազա (Emergency Events Database (EM-DAT)) – www.em-dat.net
- Սողանքների գծով միջազգային կոնսորցիում (International Consortium on Landslides (ICL)) – www.iclhq.org
- Գրունտի մեխանիկայի և ինժեներային երկրաբանության միջազգային ընկերություն (International Society for Soil Mechanics and Geotechnical Engineering (ISSMGE)) www.issmge.org/home/page.asp?sid=296&mid=2&PageId=34546
- Կիոտոյի համալսարանի սողանքների հետազոտական կենտրոն (Kyoto University Research Center on Landslides) – <http://landslide.dpri.kyoto-u.ac.jp/J-RCL.html> – www.fema.gov/hazard/landslide/index.shtm
- Prevention Web – www.preventionweb.net/english/hazards/land-slide
- USGS Landslide Hazards Program (սողանքի վտանգների ծրագիր) – <http://landslides.usgs.gov/learning/faq>

3.4 Անտառային հրդեհներ

Ընդհանուր նկարագիր

Անտառային հրդեհը անվերահսկելի հրդեհ է, որն առաջանում է ավելի քան 2 մետր բարձրություն ունեցող բուսածածկ տարածքում: Խոշոր անտառային հրդեհը կարող է արագորեն տարածվել ծառերի ամենավերին ճյուղերով: Անտառային հրդեհների ժամանակ հաճախ են տեղի ունենում ուժեղ պայթյուններ:

Հայաստանում անտառային հրդեհների հայտնաբերման համար օգտագործում են ԱԹՍ–ներով օդային պարեկության եղանակը: Ստացված տեղեկատվությունը փոխանցվում է ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն, անտառտնտեսություններ, տեղական ինքնակառավարման մարմիններ և այլ գերատեսչություններ՝ ըստ անհրաժեշտության:

Հրդեհավտանգ ժամանակաշրջանում անտառային տարածքների օդային պարեկումն իրականացվում է անտառային հրդեհների մարման պլանով հաստատված երթուղիներով՝ կախված հրդեհի բարդության աստիճանից, եղանակային պայմաններից, փաստացի այրվող անտառային տարածքների չափերից:

Ցամաքային մշտադիտարկումն իրականացվում է նաև բարձրադիր վայրերում տեղակայված դիտարկման կետերից:

Ռիսկի գործոններ

Տաք և չոր եղանակը և ոչ պատշաճ հողօգտագործումը ստեղծում են բարենպաստ պայմաններ ավելի հաճախակի, խոշոր և բարձր ինտենսիվության անտառային հրդեհների համար: Բացի այդ, հրդեհավտանգ բուսականության շուրջ բնակելի տարածքների և ենթակառուցվածքների ընդլայնումը մեծացնում է հրդեհների ռիսկը:

Խոցելի տարածքներ

Գյուղատնտեսական նշանակության հողերը և արոտավայրերը, որտեղ կրակն օգտագործվում է մոլախոտերը, թփակալումը վերահսկելու և հողը մաքրելու համար, ամենահրդեհավտանգ վայրերն են: Խոցելի այլ վայրերի շարքում են բնակելի տարածքները կամ դյուրավառ նյութերից (օրինակ՝ փայտ, ծղոտ, փայտե կղմինդր կամ տանիքի դյուրավառ այլ նյութ) կառուցված շինությունները, ինչպես նաև լքված գյուղական համայնքներն ու տները, որտեղ ոչ ոք չկա հրդեհը կանխելու կամ մարելու համար:

Աղետի ռիսկի նվազեցման միջոցառումներ

- Սահմանափակել նոր շինարարություններն անտառային հրդեհի առաջացման բարձր ռիսկայնության գոտիներում և մաքրել տների ու այլ կառույցների շուրջն աճող բուսականությունը:
- Կառուցել հակահրդեհային մեկուսիչ գոտիներ կամ անջրպետներ տների և անտառապատ կամ թփապատ տարածքների միջև, եթե գոյություն չունի բնական անջրպետ (օրինակ՝ ճանապարհ կամ գետ):
- Տնկել ցածր դյուրավառության բուսականություն:
- Խուսափել շինարարությունից բարձր ռիսկայնության տարածքներում, որոնք սահմանակցում են անտառներին, արոտավայրերին, թփապատ տարածքներին, և սահմանափակել մարդու գործունեությունը համեմատաբար հրդեհավտանգ տարածքներում:
- Օգտագործել հրդեհակայուն շինանյութեր:

- Կիրառել ցուցված այրման ավանդական և առաջատար մեթոդներ՝ գյուղատնտեսության և բուսական ու կենդանական աշխարհի կայուն կառավարման, այդ թվում՝ վառելիքի կառավարման և հրդեհային ռեժիմների վերականգնման համար:
- Սահմանել օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր համապատասխան իրավադատական մակարդակներում:
- Իրականացնել հրդեհի ռիսկի նվազեցման համայնքային գործողություններ հրդեհի կառավարման բոլոր փուլերում:
- Արձակել համայնքային տազնապներ հրդեհի առաջացման վտանգի գնահատման համակարգի միջոցով. այսպիսի համակարգերը կանխատեսում են հրդեհի պոտենցիալը՝ ելնելով վերջին տեղումներից, ջերմաստիճանից, քամու արագությունից և այլ գործոններից:
- Կրթել համայնքի բնակիչներին և բարձրացնել հանրային իրազեկվածությունն անտառային հրդեհների ռիսկերի վերաբերյալ, քանի որ հենց մարդիկ են հաճախ պատասխանատու անտառային հրդեհների համար:
- Զարգացնել հրդեհաշիջման կարողությունները և հանրային անվտանգությունը:

Անտառային հրդեհների վերաբերյալ քաղաքացիներին անհրաժեշտ տեղեկատվությունը

Տեղեկատվության տեսակ	Բովանդակություն
Աղետից առաջ	
Կանխատեսումներ և նախազգուշացումներ	Ջերմաստիճանի, խոնավության, քամու արագության և ուղղության կանխատեսում և անտառային հրդեհի նախազգուշացում
Տարահանման հրաման	Տեղեկատվություն ապաստարանների և տարահանման երթուղիների մասին
Աղետից անմիջապես հետո	
Տարահանման հրաման	Հրդեհի վայրը և տարածման տարածքը
Իսպիանումների կանխարգելման կոչ	Տեղեկատվություն հրդեհի տարածման կանխատեսման վերաբերյալ

Աղետից հետո՝ 1 ժամից մինչև 3 օր	
Տարածաշրջանին պատճառված վնաս	Տեղեկատվություն հրդեհի ընթացիկ իրավիճակի վերաբերյալ Տեղեկատվություն հրդեհաշիջման աշխատանքների վերաբերյալ Շենքերին հասցված վնաս Կենսապահովման երթուղիներին պատճառված վնաս Տեղեկատվություն զոհերի և վիրավորների մասին Տեղեկատվություն անհետ կորածների մասին Տեղեկատվություն որոնողափրկարարական աշխատանքների մասին
Տարահանում	Տարահանման վայրերի տեղակայումը և կարգավիճակը Տեղեկատվություն տարահանման երթուղիների մասին
Բուժօգնություն	Հրատապ բուժօգնության կայանների ստեղծում Տեղեկատվություն բուժհաստատությունների մասին (տեղակայում, հիվանդներ ընդունելուն պատրաստ լինելը և այլն)
Ջրամատակարարում	Ջրամատակարարման գործողությունների ընթացքը (ջրի կայաններ, ջրի ցիստեռներ, տարահանման վայրեր, ջրհորեր և այլն)
Աղետից հետո՝ 1 օրից մինչև 1 շաբաթ	
Առաջին անհրաժեշտության պարագաներ	Տեղեկատվություն առաջին անհրաժեշտության պարագաների գնման և բաշխման վերաբերյալ
Կեղտաջրի և թափոնների մշակում	Տեղեկատվություն կեղտաջրերի և աղբի մաքրման վերաբերյալ Աղետների ժամանակ կիրառվող զուգարանների տեղադրում

Երթևեկություն	Ճանապարհների վերականգնման ընթացքը Երթևեկության վերահսկման հետ կապված իրավիճակը Տեղեկատվություն հասարակական տրանսպորտի վերաբերյալ
Կյանքի վերականգնում	Տեղեկատվություն կենսապահովման ուղիների վերականգնման վերաբերյալ Տեղեկատվություն ժամանակավոր կացարանների վերաբերյալ Տեղեկատվություն օգնության բաշխման վերաբերյալ

Օգտակար հղումներ

- ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (FAO) – <http://www.fao.org/forestry/firemanagementstrategy/en>
- Հրդեհի մոնիթորինգի համաշխարհային կենտրոն (Global fire Monitoring Center) – <http://www.fire.uni-freiburg.de>



ԳԼՈՒԽ 4

ԱՂԵՏՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

4.1 Հաղորդակցությունը ռիսկի փուլում

Ռիսկի փուլում հաղորդակցությունն աղետների ռիսկի կառավարման կարևորագույն բաղադրիչներից է, քանի որ այն ձևավորում է ռիսկի վերաբերյալ մարդկանց ընկալումը և ազդում աղետներին պատրաստվածությանն ու արձագանքմանն ուղղված նրանց գործողությունների վրա: Ռիսկի փուլում հաղորդակցությունն արդյունավետ է, եթե կա բազմակողմանի ուսուցանում, աջակցում և վստահություն:

Երկար ժամանակ է պահանջվում տեղեկատվության աղբյուրի արժանահավատության ձևավորման համար, և դա պետք է արվի մինչև աղետի կատարվելը: Հետևաբար, անհրաժեշտ է ակտիվորեն ուսումնասիրել աղետների ռիսկի նվազեցման հետ կապված հարցերը ոչ միայն աղետների ժամանակ, այլև մինչև դրանց տեղի ունենալը՝ ապահով հասարակության ձևավորմանը նպաստելու, ինչպես նաև

հասարակության կայուն զարգացման նպատակով բնակչությանը գիտելիք և հմտություններ փոխանցելու գործում ջանքեր գործադրելու համար:

Նախքան աղետը կարևոր է իմանալ հետևյալը՝

1. ընդհանուր գիտական գիտելիք աղետների ռիսկի և դրանց առաջացման մեխանիզմների վերաբերյալ,
2. ազդարարման համակարգերը Հայաստանում,
3. աղետների ռիսկի նվազեցմանն ուղղված անհրաժեշտ գործողությունները, օրինակ՝ հեռուստատեսությամբ, ռադիոյով, պաշտոնական կայքերով տեղեկատվության տարածումը, ինքնուրույն գործողությունների ձեռնարկումը դեպի ապահով վայրեր տարահանումը, ակտիվ ներգրավվածություն հանրային իրազեկման գործընթացներում,
4. կառավարության հրահանգները, որոնց պետք է հետևել աղետների ժամանակ,
5. համայնքի շուրջը գտնվող ռիսկերի հստակեցում,
6. ընտանիքի անդամների հետ կապի մեջ լինելու ձևերը:

4.2 ՋԼՄ-ների դերն աղետների ռիսկի նվազեցման գործում

ՋԼՄ-ները կարող են շատ կարևոր դեր խաղալ տարերային, տեխնածին և տեխնոլոգիական աղետների համատեքստում՝ քաղաքացիների կողմից ռիսկի ընկալման, նրանց զգացմունքների, վարքակաճանների խթանման գործում: ՋԼՄ-ները կարող են նպաստել քաղաքացիների և համայնքների կարողությունների զարգացմանն ու ամրապնդմանն աղետներին պատրաստվելու, դրանց արդյունավետ արձագանքելու և վերականգնման գործընթացն արագացնելու տեսանկյունից:

Բացի այդ, աղետի ժամանակ ՋԼՄ-ների դերն ու գործառույթն է ոչ միայն տեղեկացնել աղետի առաջացման մասին, այլև ուսումնասիրել աղետների առաջացման պատճառները և դրանց սոցիալ-տնտեսական ազդեցությունը: ՋԼՄ-ները կարող են օգնել համայնքներին և պետությանը ավելի լավ հասկանալ, թե ինչն է նրանց դարձնում խոցելի և ինչ կարող են անել աղետներին դիմակայելու գործում իրենց կարողությունները զարգացնելու համար:

Երբ աղետի սպառնալիքն անխուսափելի է, ՁԼՄ-ները պետք է հաղորդակցության տարբեր միջոցներով տրամադրեն հասարակության կարիքները բավարարող տեղեկատվություն՝ ելնելով իրավիճակից:

4.3 Աղետների ժամանակ գործողությունների պլանավորում

ՁԼՄ-ների աշխատանքների շարունակականության պլանը աղետներին պատրաստվածության կարևորագույն նախապայման է: Այդ պլանը ՁԼՄ-ների համար աղետի ժամանակ և վերականգնման փուլում լուսաբանման գործողություններում հնարավորինս սահուն գործելու հիմքն է:

Այնպիսի աղետի դեպքում, որը թույլ չի տալիք ՁԼՄ-ներին իրականացնել գործունեությունն իրենց գրասենյակներից, պլանը պետք է կիրառվի յուրաքանչյուր ոլորտի պատասխանատուի կողմից աշխատանքների անխափանդությունն ապահովելու համար: Այն պետք է ներառի աշխատանքների վերականգնման ժամանակ անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը:

4.4 Հաղորդակցությունն աղետի ժամանակ

Աղետի ժամանակ միջավայրն էապես տարբերվում է, ավելանում է տարբեր տեսակի տեղեկատվության պահանջարկը: Եթե չբավարարվի այդպիսի տեղեկատվության պահանջարկը, ապա կսկսեն տարածվել ասեկոսներ և ապատեղեկատվություն: Այս առումով բավական ուսանելի և ուշագրավ է աղետների և աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ ու աղետների ժամանակ ազգաբնակչության ակնկալած տեղեկատվության վերաբերյալ ճապոնական փորձը: Ըստ մեր ճապոնացի գործընկերների ուսումնասիրությունների՝ աղետի ժամանակ մարդկանց հետաքրքրում են հետևյալ հարցերը.

- աղետի օրը, ժամը, վայրը և ծավալը,
- աղետի պատճառը,
- հետցնցումների (երկրաշարժերի դեպքում), իսկ մյուս բնական աղետների դեպքում՝ կրկնվելու հավանականությունը,
- աղետի հասցրած վնասներն ու ազդեցությունը:

Որպես արձագանքմանը նպաստող տեղեկատվություն կարևոր են՝

- տարահանմանն առնչվող ցուցումները,
- տարահանման վայրերին առնչվող տեղեկատվությունը:

Աղետների դեպքում ազգաբնակչության համար չափազանց կարևոր են նաև կենսապահովման ենթակառուցվածքների և առաջին օգնության վերաբերյալ տեղեկությունները՝

- ճանապարհներին և երթևեկությանն առնչվող տեղեկատվությունը,
- կենսապահովման ուղիների (կապ, հոսանք, գազ, ջուր, զուգարան) վիճակին և վերականգնմանն առնչվող տեղեկատվությունը,
- կառավարության և ՏԻՄ-երի արձագանքմանն առնչվող տեղեկատվությունը:

Բնականաբար, աղետների դեպքում մարդկանց խիստ հետաքրքրում է նաև կենսական կարիքները հոգալու հնարավորությունների մասին տեղեկատվությունը՝

- սննդի, ջրի և կենսական միջոցների ապահովման եղանակները և հատկացման վայրերը,
- տուժածներին ցուցաբերվող աջակցության ուղղություններն ու ծավալները,
- աղետի պատճառով առաջացած թափոնների և աղբի հեռացման կարգը:

4.5 Հաղորդակցությունը վերականգնման փուլում

Աղետից նույնիսկ մեկ շաբաթ անց մարդկանց դեռ մտահոգում են այնպիսի հարցեր, ինչպիսին են հետցնցումների վտանգը (երկրաշարժերի դեպքում), ջրագծերի, էլեկտրամատակարարման գծերի և գազատարների վերականգնման հարցը, սննդին, ջրին, կենսական միջոցներին, զուգարաններին, թափոններին, աղբին, հիգիենային առնչվող հարցերը և այլն:

Աղետի արդյունքում խաթարվում է քաղաքացիների կյանքը և կենսագործունեությունը: Վերականգնման փուլում հաղորդակցությունը քաղաքացիների կյանքն ու կենսագործունեությունը նորմալ վիճակի վերադարձնելու (վերականգնելու) ժամանակահատվածում իրականացվող հաղորդակցությունն է, որի ժամանակ տեղի է ունենում վերականգնման գործողություններին նպաստող տարատեսակ տեղե-

կատվության, կարծիքների փոխանակում, փոխըմբռնման խորացում և համաձայնության ձևավորում:

Լրատվամիջոցները հայթայթում և տարածում են ենթակառուցվածքների ու կենսաապահովման ուղիների վերականգնման վիճակի, տարահանման վայրերի, ժամանակավոր կացարանների ու կամավորական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն: Բացի այդ, նրանք պարզում են աղետից տուժած տարածքների ու անձանց կարիքները և իրականացնում դրանց վերաբերյալ լուսաբանում: Աղետից հետո իրականացվում է նաև ռիսկի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ կարծիքների փոխանակում և համաձայնեցում:

4.6 Գործողությունների ընդհանուր նկարագիրը

Անհրաժեշտ է, որ մարդը, ով ջ հասարակությունն իր կառավարման մարմիններով հանդերձ գիտակցեն անսպասելիին պատրաստ լինելու կարևորությունը: Արտակարգ իրավիճակի ժամանակ տեղեկատվությունը կարող է կյանքի արժեք ունենալ:

Ինչ էլ որ պատահած լինի, երբեք չպետք է մոռանալ, որ լրատվամիջոցներն աշխատում են իրենց լսարանի համար, իսկ աղետների ժամանակ և վերականգնման փուլերում ՁԼՄ-ների լսարանը հետևյալն է.

- աղետի գոտու և հարակից տարածքների բնակչությունը, անկախ նրանից՝ այդ մարդիկ ուղղակի են տուժել, թե անուղղակի,
- զոհվածների հարազատները,
- կառավարման մարմինները՝ տեղական, տարածքային, պետական և միջազգային մակարդակներով,
- այն գերատեսչությունները, որոնք առնչվում են աղետի, դրա հետևանքների և հակազդման հետ,
- գործարար աշխարհը՝ ներդրողներ, ապահովագրական, բաժնետիրական և այլ ընկերություններ,
- հարևան երկրները,
- միջազգային կազմակերպությունները,
- միջպետական միավորումները,
- ընդհանուր լսարանը:

Այս առումով աղետների մասին լրատվության տրամադրման ժամանակ ցանկացած գործողությունից հետո կարևորվում է գնահատումը.

- արդյո՞ք հաղորդագրությունը հասել է լսարանին,
- արդյո՞ք տվյալ հաղորդագրությունը մղում է գործողության:

Աղետի հասցված վնասը նվազեցնելուց և վերականգնման գործընթացն արագացնելուց բացի՝ տեղեկատվությունը կարևոր է նաև հետևյալ պատճառներով.

1. Մարդկանց կյանքի պահպանմանն ուղղված գործողությունները խթանելու համար

- Աղետի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման շնորհիվ խուճապի մատնված մարդիկ ավելի հեշտ են կարողանում կողմնորոշվել տարահանման հարցում:
- Սեյսմիկ աղետի դեպքում արտակարգ տեղեկատվությունը նպաստում է անվտանգության ապահովմանը, իսկ հետցնցումներին առնչվող տեղեկատվությունը՝ վտանգավոր վայրերից հեռու մնալուն:

2. Աղետի արձագանքմանն առնչվող բոլոր սուբյեկտների համար՝ որոշում կայացնելու հիմք

- Աղետից անմիջապես հետո տրամադրվող տեղեկատվությունը նպաստում է փրկարարական աշխատանքներին, արձագանքմանը, տարահանման վայրերի սահուն կազմակերպմանը և սանիտարական պայմանների պահպանմանը:
- Հետևանքների վերացման և վերականգնման փուլում կենսական տեղեկատվության տրամադրումը նպաստում է լայնածավալ օգնության տրամադրմանը/ստացմանը, վերականգնման համար անհրաժեշտ մարդուժի, նյութերի և սարքավորումների բաշխման արդյունավետության բարձրացմանը, վերականգնման ռազմավարության մշակմանը և այլն:



ԳԼՈՒԽ 5

ԱՂԵՏՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐՆ ՈՒ ՕՐԻՆԱԴՊԱՇՏՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Մի վնասիր

Լրագրությունը կարող է չկանխամտածված վնաս պատճառել: «Վնասի սահմանափակման սկզբունքը» լրագրողական էթիկայի ամենակարևոր սկզբունքներից է: Այն պահանջում է, որ հանրությանը հուզող որևէ խնդիր լուսաբանելիս ՋԼՄ-ները և լրագրողները մեծ նրբանկատություն ցուցաբերեն՝ չվնասելու մարդկանց որևէ խմբին, ինչպես նաև խուսափեն այն հարցերի լուսաբանումից, որոնք կարող են խորացնել որևէ մեկի վիշտը:

Աղետների լուսաբանման հարցում առկա են հետևյալ խնդիրները.

- ՋԼՄ-ները կարող են աղավաղել այն, ինչ տեղի է ունենում աղետի ժամանակ, և հանգեցնել թյուրըմբռնումների: Չստուգված և ոչ օբյեկտիվ տեղեկատվության տրամադրումը մարդկանց մոտ շփոթմունք և անհանգստություն է առաջացնում: Բացի այդ, այն կարող է նվազեցնել հասարակության կողմից տեղեկատվությանը վստահելու մակարդակը:

- Չափազանցված և սենսացիա պարունակող լրատվությունը կարող է աղետի գոտում անհարկի անհանգստություն առաջացնել: Մարդկանց կյանքին սպառնացող արտակարգ իրավիճակներում ապատեղեկատվությունը կարող է հանգեցնել վնասների մեծացման:
- Լրատվամիջոցներն ու լրագրողներն աղետի գոտում տուժածների հետ հարցազրույցների և լուսաբանման արդյունքում կարող են հավելյալ վնաս հասցնել արդեն իսկ տուժած քաղաքացիներին ու համայնքներին: Օրինակ՝ դա կարող է բերել վնասի մակարդակի ընկալման անորոշության կամ դժբախտությունը շահարկելուն, որը կարող է տուժածներին հոգեբանական վնաս հասցնել:

«Վնասի սահմանափակման սկզբունքը» կոչ է անում լրատվամիջոցներին և լրագրողներին պատմություններ հավաքելիս, հարցազրույցներ վարելիս կամ լուսաբանելիս անել հետևյալը.

- գիտակցել, որ լուսաբանումը կարող է բացասաբար ազդել որոշ մարդկանց վրա,
- ընկալել աղետից տուժածների կացությունը, նրբանկատ լինել նրանցից հարցազրույց վերցնելիս կամ նրանցից ստացված տեղեկատվությունը լուսաբանելիս,
- աղետից հետո լուսաբանման ծավալների կրճատումը կարող է տուժածների մոտ տպավորություն ստեղծել, թե աշխարհը մոռացել է իրենց մասին: Դա կարող է նրանց մոտ մեկուսացման զգացում առաջացնել և խոչընդոտել հոգեբանական վերականգնմանը:

5.2 Մի խանգարիչ

Աղետի վայրում ՁԼՄ-ների կողմից լուսաբանման աշխատանքները երբեմն խոչընդոտում են աղետներին արձագանքելուն և փրկարարական աշխատանքներ իրականացնելուն: Ստորև բերված են աղետի վայրում ՁԼՄ-ների կողմից լուսաբանման հետևանքով առաջացող հավանական խնդիրները.

- Աղետի վայր մեկնող ՁԼՄ-ների մեքենաները կարող են խցանում առաջացնել և ուշացնել ոստիկանության, հրշեջների և փրկարարների ժամանումը աղետի գոտի:
- Լրագրողական տեխնիկայի կիրառումը հարկավոր է համաձայնեցնել մասնագետների հետ, քանի որ այն կարող է

խնդիրներ ստեղծել (օրինակ՝ դրոնների ձայնը, հնարավոր է, խանգարի փրկարարներին լսել օգնության կանչող մարդկանց, կապի այլ միջոցները կարող են մասնագիտական տեխնիկայի խափանումների պատճառ դառնալ:

- Անհարկի հարցազրույցները կարող են խոչընդոտել պատկան մարմինների կողմից աղետին արագ արձագանքումը:
- Լրատվամիջոցներն ու լրագրողները պետք է հիշեն, որ մարդկանց կյանքի փրկումն ավելի առաջնահերթ է, քան աղետի լուսաբանումը:
- Աղետի վայր մեկնելուց առաջ պետք է լիարժեք տիրապետել անվտանգության վարքականոններին, որպեսզի տեղում լրացուցիչ խնդիրներ չառաջացնել՝ հայտնվելով վտանգավոր իրավիճակում:

5.3 Տեղեկատվության օպերատիվ հավաքագրում և լուսաբանում

Հանրային իրազեկման հաղորդագրությունների կազմման ուղեցույց ՀԼՄ-ների համար

Հաղորդագրությունը պետք է պարունակի հետևյալ հարցերի պատասխանները.

- Ի՞նչ է պատահել:
- Ե՞րբ և ինչպե՞ս դա տեղի ունեցավ:
- Քանի՞ մարդ է զոհվել և տուժել:
- Կարիքների վերաբերյալ տեղեկատվություն:
- Վնասի չափը:
- Անվտանգության ի՞նչ միջոցառումներ են ձեռնարկվել:
- Աղետի պատճառները կամ նպաստող գործոնները:
- Նման դեպք նախկինում երբևէ եղել է: Եվ արդյո՞ք բարելավվել է նման դեպքերին պատրաստվածությունը:
- Ինչպե՞ս է կազմակերպվելու հոգեբանական օգնությունը:
- Ինչպե՞ս է կազմակերպվելու սոցիալական աջակցությունը:
- Ի՞նչ քայլեր են իրականացվելու վերականգնման փուլում:

Ցանկացած ժանրի նյութը պետք է.

- տրամադրի ճշգրիտ և օպերատիվ տեղեկատվություն,
- պարունակի մարդկանց հետաքրքրող տեղեկություններ,
- առաջարկի հասարակական խնդիրների լուծում,
- ուղղորդի արձագանքման հարցում,
- պարունակի օրինակներ, մարդկային պատմություններ աղետի հետևանքով տուժածների մասին:

Հաղորդագրություն մշակելիս մեղիամասնագետները պետք է հաշվի առնեն հետևյալ հանգամանքները

- Տեղեկատվությունը պետք է լինի պարզ և ընդգրկուն:
- Տեղեկատվությունը պետք է լինի հավաստի և առանց ենթադրությունների:
- Տեղեկատվությունը չպետք է պարունակի ապակողմնորոշիչ արտահայտություններ:
- Հաղորդագրությունը չպետք է չափազանցված վախ կամ խուճապ առաջացնի:
- Պետք է ուշադրություն դարձնել բառերի ընտրությանն ու խոսքի տոնայնությանը՝ թիրախային խմբի հետ վստահության և գործընկերության փոխհարաբերություն ստեղծելու նպատակով:

Հիմնական կանոններ աղետի գոյում աշխարհը լրագրողների համար

- Պետք չէ հենվել ինֆորմացիայի միայն մեկ աղբյուրի վրա, փնտրե՛ք ու գտե՛ք այլ աղբյուրներ ևս:
- Արտահայտե՛ք մտքերը պարզ լեզվով, տեղեկացրե՛ք մարդկանց, կրկնե՛ք, հիշեցրե՛ք, որ տեղեկացրել եք: Այդպես ինֆորմացիան տպավորվում է մարդկանց մոտ:
- Ստուգե՛ք ստացված տվյալները:
- Ձգտե՛ք ցանկացած հարցի վերաբերյալ անպայման ստանալ պաշտոնական մեկնաբանություն:

5.4 Մեդիա ռազմավարություն

Հասարակությանն անհապաղ և վստահելի տեղեկատվություն տրամադրել **աղետից առաջ, ընթացքում և հետո:**

Հեռարձակել, հրապարակել նախազգուշացման և պատրաստության մասին ինֆորմացիա. ՋԼՄ-ները կարող են հրապարակել և հեռարձակել նախազգուշական կամ սպասվող աղետին պատրաստ լինելու վերաբերյալ հաղորդագրություններ՝ հասարակությանը տեղեկացնելու այն ռիսկերի մասին, որոնց նրանք, հնարավոր է, բախվեն, ինչպես նաև հուշել գործողություններ, որոնք ազդակիրները կկարողանան ձեռնարկել՝ խուսափելու կամ նվազագույնի հասցնելու մարդկային և նյութական կորուստները:

Հարցազրույցներ փուլաձևերի հետ. ՋԼՄ-ների ներկայացուցիչները կարող են լուսաբանել աղետից տուժած անձանց սոցիալ-կենցաղային պայմանները՝ աղետի ռիսկի նվազեցման կամ համապատասխան օգնության և վերականգնման ապահովմանն աջակցելու համար:

5.5 Առաջարկներ արտակարգ իրավիճակներ լուսաբանող լրագրողներին

Տեղեկատվության աղբյուրները

Վստահելի պաշտոնական աղբյուրներ

1. արտակարգ իրավիճակներում ստեղծված օպերատիվ շտաբների պատասխանատուներ,
2. երկրների ղեկավար կազմի անդամների՝ նախագահների, վարչապետերի, առանձին գերատեսչությունների ղեկավարների հայտարարություններ,
3. ոլորտային պաշտոնյաներ, որոնք կարող են հայտարարություն անել՝ կապված իրավիճակի հետ,
4. պաշտոնական հաղորդագրություններ,
5. պաշտոնական կայքեր,
6. գերատեսչությունների, պաշտոնյաների՝ սոցիալական կայքերում պաշտոնական էջերը,

7. միջազգային կազմակերպությունների պաշտոնական կայքերի ու սոցիալական կայքերում պաշտոնական էջերի հաղորդագրություններ ու հայտարարություններ,
8. մասնագիտական հեղինակավոր կառույցների հայտարարություններ:

Ո՞ր աղբյուրներից խուսափել

1. ոչ առաջնային աղբյուրներ, որոնք, ի պաշտոնե, իրավասու չեն տեղյակ լինելու տվյալ իրավիճակին և հայտարարություն անելու դրա վերաբերյալ,
2. տուժածների բարեկամներ, հարազատներ, ծանոթներ, որոնց հայտարարությունները հիմնված են ոչ թե հաստատված փաստի, այլ կարծիքի և ենթադրությունների վրա,
3. սոցիալական ցանցերի օգտատերեր, որոնք, ի պաշտոնե, տվյալ իրավիճակի մանրամասներից տեղեկացված լինելու իրավասություն չունեն,
4. մասնագետներ համարվող անձանց կարծիքներ, որոնց հայտարարությունները հիմնված են ոչ թե գիտականորեն ապացուցված տվյալների, այլ հնարավոր կանխատեսումների վրա:



ԳԼՈՒԽ 6

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՄԵԴԻԱՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

6.1 Ֆիզիկական անվտանգության ապահովումը

Կարևոր է գիտակցել և հիշել, որ լրագրողների ֆիզիկական անվտանգությունը լրագրողական աշխատանքի հաջող ավարտի առաջին նախապայմանն է: Հիշեք, որ կյանքը շատ ավելի թանկ է, քան լրատվական նյութը:

Անվտանգության հարցում մանրուքներ չկան և ամեն ինչ կարևոր է՝ սկսած խմբագրությունում հանձնարարության ձևակերպման պահից մինչև լրագրողի աշխատանքի ավարտը:

Վտանգավոր հանձնարարության մեկնելիս հարկավոր է խմբագրությունում ուղևորության մասին խորհրդակցություն անցկացնել, մշակել հաղորդակցության պլան և հավաստիանալ, որ բոլորն իրազեկ են ծրագրերի, հնարավոր չնախատեսված դեպքերի, գործող ընթացակարգերի մասին: Մեկնելուց առաջ պետք է տեղեկանալ ան-

վտանգության իրավիճակի մասին, ապահովել, որպեսզի խմբագրությունում գոնե մեկ մարդ մշտապես իմանա, թե որտեղ եք գտնվում: Բարձր ռիսկային գործը թիմային աշխատանք է, քանի որ միասին առավել անվտանգ է:

- Ունեցեք գործողությունների հիմնական և այլընտրանքային պլան (պլան Բ):
- Թիմի այլ անդամների հետ (լուսանկարիչ, օպերատոր, պրոդյուսեր և այլք) նախապես որոշեք ապագա հանդիպման վայրը, եթե միմյանց «կորցնեք»:
- Եթե ձեզ հետ դեպք է պատահել, այդ մասին հաղորդելիս անպայման նշեք, թե ո՞վ եք, որտեղ եք, ի՞նչ է պատահել, ի՞նչ քայլեր եք ձեռնարկել և ինչի՞ կարիք ունեք:

Երկրաշարժի ժամանակ

- Չի կարելի մուտք գործել այնպիսի շենքեր, որտեղ փլուզման վտանգ կա:
- Խուսափեք փրկարարական աշխատանքներ կատարելուց. եթե դրա ծայրահեղ անհրաժեշտությունը չկա, ավելի լավ է այդ գործը թողնեք մասնագետներին:
- Փողոցներում քայլելիս ուշադիր եղեք, որպեսզի որևէ փլուզված շենքից պատահաբար բեկորներ չընկնեն ձեզ վրա:
- Աշխատելիս պահպանեք որոշակի հեռավորություն շենքերից. այդպես և անվտանգ վիճակում կլինեք, և չեք խանգարի աշխատող փրկարարներին:
- Անհրաժեշտ է կրել սաղավարտ, շնչադիմակ ու ակնոց՝ փոշուց, ծխից և այլ մանր մասնիկներից պաշտպանվելու համար:

Անտրառային հրդեհի դեպքում

- Հեռու մնացեք կրակից, այրվող ծառերից:
- Ուշադիր եղեք շրջապատի նկատմամբ, քանի որ նույնիսկ քամու ուղղության պարզ փոփոխությունից կրակի տարածման ուղղությունը ևս կարող է փոխվել:
- Պարտադիր ունեցեք հակազգազ և շնչադիմակ կամ գոնե համապատասխան թաշկինակ՝ ծխից պաշտպանվելու համար,
- Կրեք կրակադիմացկուն նյութերից պատրաստված հագուստ,
- Միշտ ունեցեք այրվածքների դեմ դեղամիջոցներ ու քսուքներ:

Սողանքների ժամանակ

- Հեռու մնացեք վտանգավոր գոտուց:
- Պահպանե՛ք անվտանգության նույն կանոնները, ինչ երկրաշարժերի կամ հրդեհների դեպքում:

6.2 Հոգեբանական անվտանգության ապահովումը

Արտակարգ իրավիճակներում հայտնված ցանկացած մարդու մոտ կարող է ի հայտ գալ հոգեբանական և հուզական լարվածություն: Ումանց մոտ այն ուղեկցվում է ներքին կենսական պաշարների մոբիլիզացումով, մյուսների մոտ՝ աշխատունակության նվազումով կամ նույնիսկ խախտումով, առողջության վատթարացմամբ, ֆիզիոլոգիական ու հոգեբանական սթրեսային երևույթներով:

Զանգվածային ողբերգություններ լուսաբանող լրագրողները հաճախ են հանդիպում բարդությունների: Նրանք հնարավորություն ունեն առաջինն արձագանքել կատարվածին, գործ ունեն ականատեսների, տուժածների և նրանց վշտի հետ: Ցանկացած արյունալի դեպք լուսաբանելիս նրանք կարծես մասնագիտական պատ են անցկացնում իրենց և այն մարդկանց միջև, որոնցից հարցազրույց են վերցնում: Ծանր կորուստներ կրած մարդկանց հետ շփվելուց հետո հենց այդ պատը կարող է օգնել լրագրողին հաղթահարել սեփական ցավի զգացումը:

Ստորև ներկայացված է մեջբերում «Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի» կողմից հրապարակված «Լրագրողների անվտանգությունը» ձեռնարկից.

«Իսմբագրության անձնակազմի յուրաքանչյուր անդամ պետք է տեղեկացված լինի՝ ինչ անել տրավմայի դեպքում: Թիմի անդամները պետք է հասկանան, որ մարդիկ տարբեր կերպ են դիմակայում տրավմաներին, որ դրանց ազդեցությունը կարող է կուտակվել ժամանակի ընթացքում: Նրանք պետք է կարողանան կողմնորոշվել՝ երբ է, որ իրենք կամ իրենց գործընկերները կարիք ունեն ավելի ակտիվ ինքնօգնության: Սա վերաբերում է բոլոր աշխատակիցներին, այդ թվում՝ օգնականներին ու տեխնիկական անձնակազմին»:

Որո՞նք են զգուշանալու նախանշանները

Եթե աշխատանքի ընթացքում նկատում եք, որ չեք կարողանում կենտրոնանալ, ցրված եք, դժվարանում եք պարզ գործողություններ կատարելիս, դարձել եք բռնկվող և չափից դուրս բարկացած, ուրեմն ժամանակն է անհանգստանալ: Ուշադիր եղեք նաև այն դեպքերում, երբ ֆիզիկական կամ հոգեկան գերհոգնածություն եք զգում կամ պարբերաբար ունենում եք անպետքության, անօգնականության, սարսափի, սեփական կյանքի համար վախի, ամոթի զգացում: Նման դրսևորումները վկայում են, որ ընդմիջման կամ շրջագայելու կարիք կա: Եթե դրանք շարունակվում են ավելի քան 3–4 շաբաթ կամ որևէ փուլում չափազանց ընդգծված են արտահայտվում, դիմեք մասնագետի օգնությանը:

Ողբերգական տեսարաններով պատկերների հետ աշխատելը

Պատերազմի, հանցագործությունների, արտակարգ իրավիճակների, բնական աղետների տեսարանները հաճախ ճնշող և ազդեցիկ են: Թեև այդ իրադարձությունները ներկայացնող լուսանկարներն ու տեսագրությունները բարձր փաստագրական և լրատվական արժեք ունեն, սակայն պետք է զգույշ լինել, քանի որ այդ նյութերը կարող են ռիսկի տակ դնել մարդկանց հոգեվիճակը:

Հասկացե՛ք՝ ինչի հետ գործ ունեք

Ատաճեք տրավմատիկ պատկերի մասին՝ ասես այն արձակում է թունավոր նյութ, որը կախվածության մեջ գցելու հատկություն ունի: Լրագրողներն ու մարդասիրական գործունեությամբ զբաղվողները, ինչպես միջուկային ուլորտի աշխատակիցները, ունեն իրենց առջև դրված հստակ աշխատանք, բայց միևնույն ժամանակ ողջամիտ քայլեր պետք է կատարեն անհարկի ազդեցությունները նվազագույնի հասցնելու համար: Դիտման հաճախականությունը կարող է առավել խնդրահարույց լինել, քան քանակը, ուստի մտածեք տրավմատիկ նկարների հոսքերի և դիտման ընդմիջումների մասին:

Նվազեցրեք ոչ անհրաժեշտ կրկնակի ազդեցությունը

Վերանայեք նյութերը դասավորելու և նշելու ընթացակարգերը: Փորձեք այնպես կազմակերպել թվային ֆայլերի ու թղթապանակների հետ աշխատանքը, որ զերծ մնաք անհարկի դիտումներից: Երբ կատարում եք պատկերի նույնականացում՝ այն տարբեր աղբյուրների հետ համադրելով, կարևոր հատկանիշների մասին գրառումներ կատարելը կարող է օգնել, որպեսզի շատ հաճախ չդիտեք բնօրինակի հետ համեմատվող նկարները: Երբեք նյութը գործընկերոջը մի փոխանցեք՝ առանց նախազգուշացնելու, թե այնտեղ ինչ կա:

Փորձարկումներ արեք, թե ինչ հեռավորությունից կարելի է դիպել նկարները

Որոշ մարդիկ գտնում են, որ օգտակար է կենտրոնանալ ինչ-որ դետալների վրա, օրինակ՝ հագուստի, և խուսափել այլ բաներից, օրինակ՝ դեմքից: Կարող եք ժամանակավորապես ծածկել նկարի առավել անհանգստություն պատճառող հատվածները: Արյունալի պատկերներ պարունակող կադրերի հետ աշխատելիս մոնտաժողները պետք է խուսափեն կրկնվող տեսարանների ֆունկցիայի օգտագործումից (loop play) կամ այն չափավոր օգտագործեն: Ունեցեք վերոհիշյալ խնդիրները հաղթահարելու սեփական մեթոդները:

Հաճախակի ընդմիջումներ արեք

Որևէ հաճելի բան դիտեք, շրջեք, մարզվեք կամ շփվեք բնության հետ (կանաչ տարածություն և մաքուր օդ): Այս ամենը կօգնի խլացնել գերհուզված վիճակը: Մասնավորապես, խուսափեք քնելուց առաջ ճնշող նկարների հետ աշխատելուց. այդ ժամերին դա ձեր հոգեկան վիճակի վրա ավելի ուժգին ազդեցություն կարող է ունենալ: Այն գրասենյակը, որտեղ աշխատում եք պատկերների հետ, պետք է դուրս նայող պատուհան ունենա, որտեղից երևում են ծառեր և բնության այլ տեսարաններ:

Կազմեք ինքնօգնության սեփական ծրագիրը

Ձեզ մոտ կարող է ցանկություն առաջանալ բարձր կարևորություն ունեցող պատմության վրա աշխատել երկու, երեք, չորս ժամ, անգամ

ավելի շատ: Բայց կարևոր է ժամանակ թողնել նաև աշխատանքից դուրս շունչ քաշելու համար: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ավելի դիմադրունակ են այն մարդիկ, որոնք կանոնավոր մարզվում են, ունեն հետաքրքրություններ և նախասիրություններ, ժամանակ են հատկացնում սոցիալական շփումների համար: Կան լրագրողներ, որոնք իրենց անաշխատունակ են դարձնում գերհոգնածության պատճառով:

Խոսեք այդ մասին

Մի վախեցեք խոսել այն նկարների կամ բովանդակության մասին, որոնք ձեզ համար ծանր են: Հավանական է, որ ձեր գործընկերները նույնն են զգում, նույնիսկ եթե չեն արտահայտվում: Խորհուրդներ տվեք ավելի երիտասարդ ու ոչ այնքան փորձառու գործընկերներին: Անկեղծ եղեք ծանր պատկերների հետ աշխատելիս. միասնականությունը և սոցիալական կապերը խնդիրները հաղթահարելու հիմնաքարերն են:

Երբեք մի մոռացեք, որ դուք միայն լրագրող եք, այլ ոչ թե նաև փրկարար, բժիշկ, հոգեբան, սոցիալական ծառայող և այլն: Եթե լրագրողն իր ուսերին վերցնի աշխարհի բոլոր դժբախտությունները, մարդկային հոգսերը, խնդիրները կամ դրանք համարի իր անձնականը, ապա շատ կարճ ժամանակամիջոցում կհասնի խելագարության: Լավագույն դեպքում՝ մշտական սթրեսները կլինեն նրա անբաժան ուղեկիցները:

6.3 Տարրական առաջին օգնություն

Հաճախ վտանգավոր վայրերում կամ աղետի գոտիներում աշխատող լրագրողներն ու այլ մեդիա մասնագետները հենց իրենք են հայտնվում վտանգի մեջ կամ ստանում վնասվածք: Ուստի աղետի գոտի մեկնող յուրաքանչյուր լրագրող պետք է նախապես ուսումնասիրի և սովորի առաջին օգնության՝ ինչպես ֆիզիկական, այնպես էլ բուժօգնության, հոգեբանական օգնության տարրական կանոնները և հմտությունները: Հմուտ գործողություններով հնարավոր է ոչ միայն ապահովել սեփական անվտանգությունը, այլև այլոց կյանքեր փրկել: Առաջին օգնության գիտելիքները կօգնեն լրագրողներին արտակարգ իրավիճակներում կողմնորոշվելու, ճիշտ որոշում ընդունելու և անհրաժեշտ քայլեր ձեռնարկելու հարցերում:

Առաջին օգնությունն արտակարգ իրավիճակում ձեռնարկվող գործողությունների համակարգ է, որի խնդիրն է օգնել տուժածին կամ տուժածներին մինչև մասնագիտական օգնության ժամանումը:

Աղետը լուսաբանող լրագրողը պետք է նաև առաջին բուժօգնության նախապատրաստական դասընթաց անցնի:

6.4 Անհատական պաշտպանության միջոցներ

Աղետի գոտի մեկնելը ՁԼՄ ներկայացուցիչներից պահանջում է ոչ միայն մասնագիտական, ֆիզիկական ու հոգեբանական պատրաստվածություն, այլև որոշակի «իրային» ապահովվածություն: Բացի մասնագիտական տեխնիկայից, լրագրողներն իրենց հետ պետք է ունենան նաև որոշ խիստ անհրաժեշտ և կարևոր իրեր ու պարագաներ.

- **Ամուր ու հարմարավետ հագուստ**

Կրեք ազատ, բնական գործվածքից հագուստ, քանի որ այն չի բռնկվի այնքան արագ, որքան սինթետիկը: Ցանկալի է, որ լրագրողների հագուստը տարբերվի ոստիկանության կամ փրկարարների համազգեստից: Հարմարավետ, ամուր, ձիգ կապված կոշիկները անհրաժեշտություն են: Հրդեհների դեպքում աշխատեք հագնել դժվար հրկիզվող նյութերից պատրաստված հագուստ կամ պաշտպանիչ միջոցներ:

- **Ուսապարկ**

Ցանկալի է, որ աղետի վայրում աշխատելիս ունենաք ուսապարկ՝ անհրաժեշտ իրերով, տեխնիկայով, փաստաթղթերով, որոշակի քանակի սննդով ու ջրով: Ուսապարկը նման դեպքերում անհամեմատ ավելի հարմար է, քան ուսից կախվող պայուսակները, քանի որ կրողի շարժունակությունն անհամեմատ ավելի մեծ է: Հոգ տարեք, որ ուսապարկը գոնե մեկ կապով ամրանա կրծքավանդակի հատվածում, մեկով էլ՝ գոտկատեղի հատվածում. այդպես ավելի հարմար է, երբ վազում եք: Ուսապարկում այնքան ուտելիք և ջուր ունեցեք, որ բավական լինի ձեզ մեկ օրվա համար: Ուսապարկում հարկավոր է պահել նաև ջրի մաքրման միջոցներ:

- **Սաղավարտ**

Աղետի գոտի մուտք գործելիս անհրաժեշտ է կրել սաղավարտ կամ պաշտպանիչ գլխարկ:

- **Կապի անհատական և այլընտրանքային միջոցներ**

Բջջային հեռախոս՝ արտակարգ իրավիճակների համար նախատեսված հեռախոսահամարները նախապես կարգավորելով արագ միանալու համար: Բացի ձեր հիմնական հեռախոսից կամ սմարթֆոնից, փորձեք վերցնել նաև լրացուցիչ հեռախոս, ցանկալի է՝ կապի այլ օպերատորի քարտով:

- **Առաջին բժշկական օգնության դեղարկղիկ՝** դեղորայք, վիրակապական նյութեր (իմացե՛ք՝ ինչպես օգտագործել դրանք):
- **Հակազագ, շնչադիմակ՝ ռեսպիրատոր կամ դեմքը ծածկող երեսկալ՝** ծխից կամ փոշուց պաշտպանվելու համար:
- **Աչքերը պաշտպանելու միջոցներ՝** լողի կամ պաշտպանիչ և հարվածադիմացկուն ապակուց ակնոց:
- **Գրպանի բազմաֆունկցիոնալ ծալովի դանակ** կամ գործիքների հավաքածու. հավատացե՛ք՝ այն միշտ պետք է գալիս:
- **Գրպանի լապտեր:**
- **Ռադիոընդունիչ:**
- **Փոքրիկ կրակմարիչ:**
- **Մեկանգամյա օգտագործման հակաաղմկային ականջակալներ.** աղետի վայրում աղմուկից խուսափելու և լսողության օրգաններն ու դրանց ֆունկցիան պաշտպանելու համար:
- **Փաստաթղթեր (ID, անձնագիր, լրագրողական վկայական և այլն):**
- Աղետի տեղանքի կամ բնակավայրի **քարտեզ, գրպանի կողմնացույց՝** տեղանքում կողմնորոշվելու և ճիշտ տեղաշարժվելու համար:
- **Անձնական հիգիենայի պարագաներ:**



ԳԼՈՒԽ 7

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

7.1 Քաղաքացիների հիմնական իրավունքներն ու ազատությունը

- Ոչ հանրային վայրում նկարահանում իրականացնելու և հարցազրույց վարելու համար անհրաժեշտ է նախապես համաձայնություն ստանալ նկարահանվողներից և հարցազրույց տվողներից:
- Նախքան անչափահասներին նկարահանելը ստացեք նրանց ծնողների համաձայնությունը:
- Անհրաժեշտ է հարցազրույց տվողների հետ անկեղծ լինել՝ կարևորելով փոխադարձ վստահությունը:
- Անհրաժեշտ է պահպանել մասնագիտական էթիկայի կանոնները, իրականացնել արդար և անկողմնակալ լուսաբանում:
- Չիրականացնել նկարահանում կամ ծայնագրում, եթե դիմացինը դեմ է դրան: Հաշվի առնելով անձնական կյանքի ան-

ծեռնմխելիության իրավունքը՝ նկարահանումները բնակարաններում, տներում, գրասենյակներում և հիվանդանոցներում կարող են իրականացվել միայն բնակիչների կամ ղեկավարության համաձայնությամբ:

7.2 Հեղինակային իրավունքների կարևորությունը աղետների լուսաբանման ժամանակ

Աղետներ լուսաբանելիս լրագրողներն ու ՋԼՄ-ները հաճախ կարող են բախվել հեղինակային իրավունքների պաշտպանության խնդիրներին: Սա վերաբերում է հատկապես այն դեպքերին, երբ լրատվամիջոցը ներկայացնում է ոչ սեփական տեղեկատվություն՝ վերահրապարակում է գործընկերների կողմից հրապարակված տեղեկատվությունը, տեսաձայնային բովանդակությունը, կամ էլ սիրողական նկարահանումներ ու լուսանկարներ: Այս առումով հարկ է մշտապես պահպանել որոշակի դրույթներ.

- աղետին վերաբերող լուսանկարները և տեղեկատվությունը վերահրապարակելիս պետք է ձեռք բերել տվյալ լրատվամիջոցի կամ հրապարակման հեղինակի թույլտվությունը,
- հղում կատարել այն լրատվամիջոցին, որի նյութերը վերահրապարակում եք,
- ստուգել լուսանկարի կամ տեղեկատվության սկզբնաղբյուրը:

7.3 Լրագրողական աշխատանքի էթիկական սկզբունքներն աղետներ լուսաբանելիս

Հոգեբաններն ընդգծում են, որ լսարանի համար առավել սթրեսային են լրագրողների որոշ գործողություններ, որոնք կարող են երբեմն անտեսել մասնագիտական էթիկան՝ ելնելով տեղեկատվություն ապահովելու անհրաժեշտությունից: Սակայն առանձնակի դաժանություն պատկերող կամ սթրես առաջացնող այլ տեղեկատվության՝ տեսանյութերի կամ լուսանկարների հրապարակումը պետք է տեղի ունենա միայն բացառիկ դեպքերում: Մյուս բոլոր դեպքերում առաջարկվում է.

1. Անհարմար վիճակում չնկարահանել վշտի ու հուսահատության մեջ գտնվող մարդուն:
2. Չցուցադրել մարդուն ստորացված կամ արժանապատվությունը նսեմացված վիճակում:
3. Չցուցադրել վիրավոր ու բուժում ստացող տուժածների՝ խոշոր պլանով վնասվածքները կամ անդամահատված վերջույթները:
4. Վախ, խղճահարություն, ֆիզիկական «թերություններ» պատկերող հրապարակումներ չանել:
5. Առանց անունների ճշգրտման զոհերի և վիրավորների թիվ չհրապարակել:
6. Խուսափել մարդուն զոհ կամ վիրավոր համարելուց, եթե անգամ կորած է նրան ողջ դուրս բերելու հավանականությունը, բայց նրա աճյունը գտնված չէ: Պահպանել մարդու՝ մինչև վերջ հույս ունենալու զգացումը և մահացած լինելու մասին հայտնել միայն այն դեպքում, երբ գտնված են նրա աճյունը կամ մասունքները:
7. Զգուշանալ կրկնակի տրավմա առաջացնելուց: Խուսափել ցավոտ պատմությունները որոշ ժամանակ անց կրկնելուց: Մարդուն մոռանալու հնարավորություն տալ:
8. Մատնանշել դրական միտումները, եթե անգամ իրադարձությունների ընդհանուր ծավալի մեջ դրանք փոքր տեղ են զբաղեցնում:
9. Հրապարակել մարդկային պատմություններ, որոնք ցույց կտան, թե ինչպես է բարդ իրավիճակում հայտնված մարդը հաղթահարել դրանք:
10. Հրապարակել հայտնիների ոգևորիչ խոսքը, միասնականության կոչերը և այլն:
11. Պատմել հաջողությունների և հնարավորությունների մասին:
12. Ցույց տալ արտակարգ իրավիճակում գտնվող մարդկանց տոկունությունն ու կամքը:
13. Հատուկ տեղ հատկացնել նորարարություններին:



ԳԼՈՒԽ 8

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱԻՆ-Ի, ՏԻՄ-ԵՐԻ ԵՎ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ

8.1 Լրատվամիջոցների համագործակցությունը ԱԻՆ-ի հետ

Խոշոր աղետի դեպքում ՋԼՄ-ների ուշադրությունն անմիջապես կենտրոնանում է արտակարգ իրավիճակների նախարարության (ԱԻՆ) կողմից տրվող տեղեկատվության վրա: Այս մասին միշտ պետք է հիշեն ինչպես ԱԻՆ-ի համապատասխան աշխատակիցները, այնպես էլ լրատվամիջոցները: Աղետների դեպքում ԱԻՆ-ն ունի նախապես մշակված գործողությունների ընթացակարգ, որի համաձայն իրականացվում են գերատեսչության աշխատանքները: Եվ որևէ տեղեկատվություն հրապարակելու համար ԱԻՆ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին անհրաժեշտ է որոշակի ժամանակ: Ուստի չարժե ամեն վայրկյան փորձել զանգահարել ԱԻՆ՝ լրացուցիչ տեղեկություն ստանալու կամ ճշտելու ակնկալիքով: ԱԻՆ-ը օպերատիվ կերպով և որոշակի ժամանակահատվածում՝

- տարածում և հրապարակում է հաղորդագրություններ,
- տրամադրում է անհրաժեշտ ինֆորմացիա,
- անհրաժեշտության դեպքում՝ կազմակերպում է մամուլի ասու-
լիսներ,
- ներկայացնում է համապատասխան մասնագետների կարծի-
քը կամ մասնագիտական գնահատականը,
- կարող է մատուցել կարևոր այլ ինֆորմացիա՝ ըստ տվյալ պա-
հի և իրավիճակի թելադրանքի:

ԱԻՆ-ը լրատվամիջոցներին է տրամադրում հետևյալ տեղեկատ-
վությունը.

- աղետի մասին ամփոփ ինֆորմացիա (էրբ, որտեղ, ինչ է տե-
ղի ունեցել և այլն),
- վնասների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն,
- աղետի կառավարման շտաբի գործունեության վերաբերյալ
տեղեկատվություն,
- տարահանման հորդոր և հրաման, եթե նման անհրաժեշտու-
թյուն կա,
- փրկարարական աշխատանքներին մասնակցության կոչ՝ ըստ
անհրաժեշտության,
- երկրաշարժի դեպքում՝ տեղեկատվություն հետցնցումների
վերաբերյալ,
- տարահանվածների անվանացանկը տարահանման վայրե-
րում,
- կենսապահովմանն առնչվող տեղեկատվություն,
- հոսանքի, գազի և ջրի մատակարարման վերաբերյալ տեղե-
կատվություն,
- սննդի և առաջին անհրաժեշտության ապրանքների տրա-
մադրման վերաբերյալ տեղեկատվություն,
- ճանապարհների երթևեկելիության և տրանսպորտային մի-
ջոցների վերաբերյալ տեղեկատվություն,
- բժշկական հաստատությունների գործունեության վերաբե-
րյալ տեղեկատվություն,
- ծառայությունների մատուցման վերսկսման վերաբերյալ տե-
ղեկատվություն,
- այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ ըստ իրավիճակի:

Լրատվամիջոցները պետք է վերոնշյալ տեղեկատվությունը հնա-
րավորինս արագ փոխանցեն բնակչությանը: Այն դեպքում, երբ տեղե-
կատվությունը հրատապ և կարևոր է, ինչպես նաև կարող է էական

ազդեցություն ունենալ մարդկային կյանքերը և ունեցվածքը փրկելու հարցում, լրատվամիջոցները պետք է ընդհատեն ընթացիկ հաղորդումները և իրականացնեն աղետի վերաբերյալ տեղեկատվության արտակարգ թողարկում:

Արտակարգ թողարկումը հնարավորինս արագ ու ճշգրիտ իրականացնելու համար ԱԻՆ-ը և լրատվամիջոցները պետք է նախապես համաձայնեցնեն տեղեկատվության ստացման ընթացակարգը, եղանակը, հեռարձակման ենթակա կետերը, հաճախականությունը և այլն:

8.2 Համագործակցությունն ԱԻՆ-ի, ՏԻՄ-երի և լրատվամիջոցների միջև

ՀՀ կառավարության թիվ 346-Ն որոշման համաձայն՝ արտակարգ իրավիճակներում տեղեկատվության տրամադրման սուբյեկտներ են Տեղական ինքնակառավարման մարմինները և կազմակերպությունների ղեկավարները: Իրավիճակի, կարիքների, հետևանքների ու այլ՝ բնակչության պաշտպանության համար անհրաժեշտ տվյալների հավաքագրումն իրականացնում են ՏԻՄ-երը՝ իրենց ծառայություններով (այդ թվում՝ նաև վթարային), ՀՀ ոստիկանության, ՃՈ, ՀՀ ԱԻՆ-ի հերթապահ ստորաբաժանումները, ՀՀ ՊՆ օդուժը: Տեղեկատվության փոխանցման գործընթացը ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն (ՃԿԱԿ), մարզային ճգնաժամային կառավարման կենտրոններ կանոնակարգված է նույն որոշմամբ և ապահովվում է ՃԿԱԿ-ում ոլորտային ներկայացուցիչների և օպերատիվ հերթապահների միջոցով:

Լրատվամիջոցները պետք է տեղյակ լինեն այս մասին և պատշաճ կերպով լուսաբանեն իրադարձությունը:



ԳԼՈՒԽ 9

ԱՂԵՏՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

9.1 Վերապատրաստման նպատակն ու կարևորությունը

Աղետների լուսաբանման ոլորտում վերապատրաստման նպատակն է լրագրողներին կոնկրետ գիտելիքներ փոխանցել իրական աղետի ժամանակ գործելու և դրան պատրաստվելու եղանակների վերաբերյալ:

Քանի որ աղետներն ուղղակիորեն և անուղղակիորեն ազդում են լրատվամիջոցների և լրագրողների վրա, և աշխատանքային միջավայրը կտրուկ տարբերվում է սովորական պայմաններից, լրագրողները պարտավոր են լրացուցիչ գիտելիքներ ստանալ՝ աղետները պատշաճ և ամբողջապես լուսաբանելու համար: Աղետի ընթացքում և հետո հանրության կողմից պահանջվող տեղեկատվությունը ժամանակի հետ անընդհատ փոխվում է, ուստի լրատվամիջոցներից և լրագրողներից պահանջվում է մշտապես թարմացնել լրատվությունը և հետևել իրադարձությունների զարգացմանը:

«Առաջին օգնության», «Անձնական անվտանգության» և «Բժշկական օգնության» վերաբերյալ ծրագրերն արդյունավետ են անվտանգության նկատմամբ ընդհանուր վերաբերմունքը փոխելու և առաջադրանքների համար այլ նախապատրաստական աշխատանքներ իրականացնելու համար:

Վերապատրաստման ընթացքում լրագրողներին պետք է գիտելիքներ փոխանցվեն աղետների ռիսկերի և դրանց նվազեցման միջոցառումների, ինչպես նաև աղետների լուսաբանման վերաբերյալ: Պետք է վերապատրաստում իրականացվի ՁԼՄ-ների հիմնական անձնակազմի և պայմանագրային լրագրողների ֆիզիկական և մտավոր անվտանգության ապահովման ուղղությամբ, ինչպես նաև խթանվի ՁԼՄ-ների անձնակազմի կողմից աղետի գոտում անվտանգ աշխատանքի վերաբերյալ գիտելիքների ձեռքբերումն ու կատարելագործումը:

Լրագրողների վերապատրաստումը պետք է ներառի հետևյալ հարցերը.

1. Լրատվական գործունեության հարցեր

Երբեմն լրատվության թե՛ հավաքագրման, թե՛ հրապարակման աշխատանքները անհնարին են դառնում աղետի ժամանակ ՁԼՄ-ների ենթակառուցվածքների վնասվելու, ինչպես նաև, ընդհանուր առմամբ, հասարակական օբյեկտների ու ենթակառուցվածքների շարքից դուրս գալու պատճառով: Սա տեղի է ունենում հատկապես խոշոր աղետից անմիջապես հետո: Ուստի, լրատվամիջոցներն ու լրագրողները պետք է նախապես պլանավորեն, թե ինչպես շարունակել աշխատանքը վատ սցենարի դեպքում, որը ենթադրում է լուսաբանման և լրատվության հավաքագրման սահմանափակում՝ պայմանավորված խմբագրությունների և կապի ենթակառուցվածքների շարքից դուրս գալով, ճանապարհների խցանումով և վառելիքի պակասով:

2. Ֆիզիկական ռիսկեր և աղետների լուսաբանման պատրաստվածության բացակայություն

Աղետի վայրում աշխատող լրագրողները և մեկնաբանները պարտավոր են ապահովել իրենց ֆիզիկական անվտանգությունը: Մեծ երկրաշարժից հետո կարող են տեղի ունենալ հետցնցումներ, որոնք կարող են շենքի հետագա փլուզման պատճառ դառնալ: Բացի այդ, աղետի գոտում առկա են անվտանգության այլ ռիսկեր, ինչպիսին են կողո-

պուտները և սեռական բռնությունները: Հնարավոր է՝ դժվար լինի աղետի վայրում գտնել առաջին անհրաժեշտության իրեր, այդ թվում՝ ապաստարան, սնունդ և սանիտարական բարվոք պայմաններ:

3. Հոգեբանական խնդիրներ

ԶԼՄ-ներն ու լրագրողները կարող են հոգեբանական սթրեսի ենթարկվել՝ աղետի վայրում ականատես դառնալով ավերված տարածքների ու զոհերի, և իմանալով վերապրածների տառապանքները: Նրանց մոտ կարող է ի հայտ գալ ներքին կոնֆլիկտ և մեղքի զգացողություն:

9.2 Վերապատրաստում խմբագրությունում

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ աղետների լուսաբանման, դրանց ընթացքում անվտանգության ապահովման և սարքավորումների պահպանության ուղղությամբ լրագրողների և ԶԼՄ աշխատակիցների համար պարբերաբար անցկացվող վերապատրաստումները ծայրաստիճան արդյունավետ են: Վերապատրաստման արդյունավետ միջոց են վարժանքները: Դրանք անցկացվում են խաղարկային եղանակով աղետների յուրաքանչյուր տեսակի համար մշակված սցենարով, որտեղ անձնակազմը խաղարկում է աղետի ընթացքը և հետևանքները լուսաբանելը:

Հեռարձակող լրատվամիջոցների համար կարևոր է խաղարկել հեռարձակումն արտակարգ իրավիճակի պայմաններում՝ ապահովելու նորությունների անխափան և շարունակական թողարկումը: Կարևոր են նաև վարժանքից հետո անցկացվող հանդիպում-քննարկումները:

9.3 ԱԻՆ–ի կողմից իրականացվող վերապատրաստումը

ԱԻՆ–ը նախատեսում է անցկացնել վերապատրաստում ԶԼՄ աշխատակիցների և լրագրողների համար՝ Հայաստանում ռիսկի վերաբերյալ հաղորդակցությունը և ճգնաժամային հաղորդակցությունը բարելավելու նպատակով: Վերապատրաստումը կկազմակերպվի տարին երկու անգամ: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է նախատեսվող վերապատրաստման բովանդակությունը:

Մոդուլ		Ակնարկ
Տեսական	Ակնարկ ճգնաժամային հաղորդակցության վերաբերյալ	Տրամադրվում է հիմնական գիտելիք ԱՌՆ և ճգնաժամային հաղորդակցության վերաբերյալ: Բացատրվում է նաև վերապատրաստման նպատակը:
	ԳՍԸ*	Տրամադրվում է մշակված ԳՍԸ-ն: Բացատրվում է ԳՍԸ նպատակը և յուրաքանչյուր գլխի բովանդակությունը:
	Ուղեցույց ՋԼՄ-ների համար	Տրամադրվում է ՋԼՄ-ներին ուղղված ուղեցույցը (սույն ուղեցույցը): Բացատրվում է ՋԼՄ-ների դերը, հիմնական քաղաքականությունը և բազային գիտելիք Ծրագրի թիրախային աղետներից յուրաքանչյուրի վերաբերյալ:
Կիսագործնական	Դեպքերի ուսումնասիրություն	Ներկայացվում են դեպքերի ուսումնասիրություններ Ճապոնիայում ճգնաժամային հաղորդակցության վերաբերյալ: Ելնելով դեպքերի ուսումնասիրությունից՝ վերապատրաստման մասնակիցները քննարկում են Հայաստանում ճգնաժամային ոլորտի խնդիրներն ու հարցերը:
Գործնական	ՋԼՄ-ների քարոզարշավ	ՋԼՄ-ների քարոզարշավ անցկացնելու համար բացատրվում է նախապատրաստական աշխատանքների ընթացակարգը: Առաջարկվում են նաև գործողություններ ՋԼՄ-ների քարոզարշավի համար:

*ԳՍԸ-ն գործողությունների ստանդարտ ընթացակարգի հապավումն է: ԳՍԸ-ն ցույց է տալիս ԱԻՆ-ի կողմից իրականացվող ճգնաժամային հաղորդակցության ընթացակարգը:

Կոնտակտային տվյալներ.

012/31-77-20, 012/3177-56, 012/31-78-08,

ՀՀ ԱԻՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժին

Հղումներ

Ուղեցույցի որոշ հատվածներ մշակվել են հղում կատարելով ստորև բերված գրականությանը

- NHK (Ճապոնիայի հանրային հեռարձակող) (2020 թ.), Հեռարձակման ուղեցույց
- Միավորված ազգերի կազմակերպության Աղետների նվազեցման միջազգային ռազմավարություն (2012 թ.), Աղետը տարբեր ոսպնյակների միջով
- Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, Երևան (2018 թ.), «Լրագրողների անվտանգությունը» ձեռնարկ
- Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալություն (2009 թ.), Ղազախստանի Ալմաթի քաղաքի սեյսմիկ աղետի ռիսկի կառավարման ուսումնասիրություն, ավարտական հաշվետվություն

Աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ)/ Աղետների ռիսկի կառավարման (ԱՌԿ) ոլորտի տերմինաբանություն

Необходимые термины в области сокращения риска бедствий

Terminology of Disaster Risk Reduction (DRR) / Disaster Risk Management (DRM)

ԱՌՆ/ԱՌԿ ոլորտի տերմինաբանություն	Основная терминология	Essential terminology of DRR/DRM
<p align="center">Հետցնցումներ / նախացնցումներ</p> <p>Նախացնցումներն այն երկրաշարժերն են, որոնք նախորդում են ավելի մեծ երկրաշարժին (հիմնական ցնցում), իսկ հետցնցումներն այն երկրաշարժերն են, որոնք հաջորդում են հիմնական ցնցմանը և տեղի են ունենում նույն խզման գոտում:</p>	<p align="center">Афтершок / Форшок</p> <p>Предварительный толчок является толчком, предшествующим перед большим толчком (главным толчком) землетрясения, а афтершок – толчком вслед за главным толчком и возникает в одной зоне разрушения.</p>	<p align="center">Aftershocks / Foreshocks</p> <p>Foreshocks are earthquakes precede a larger earthquake (main shock), and aftershocks are earthquakes that follow a main shock and originate within one rupture zone.</p>
<p align="center">Աղետ</p> <p>Տարերային կամ տեխնածին վտանգների հետևանքով համայնքի կամ հասարակության գործունեության լուրջ խաթարում, որն առաջացնում է մարդկային, նյութական, տնտեսական կամ էկոլոգիական լայնածավալ կորուստներ, որոնք գերազանցում են ազդակիր համայնքի կամ հասարակության՝ սեփական ռեսուրսների կիրառմամբ դրանք հաղթահարելու կարողությունը:</p>	<p align="center">Бедствие</p> <p>Серьезное разрушение, причиненное факторами риска природного и техногенного характера для функционирования общества или общества, причиняющее человеческий, материальный, экономический ущерб либо ущерб окружающей среды, которые превышает способность пострадавших сообществ или обществ бороться с ними посредством своих ресурсов.</p>	<p align="center">Disaster</p> <p>A serious disruption caused by natural or manmade hazards to the functioning of a community or a society causing widespread human, material, economic or environmental losses which exceed the ability of the affected community or society to cope using its own resources.</p>

<p>Երկրորդային աղետներ</p> <p>Աղետներ, որոնք առաջանում են երկրաշարժից հետո կամ երկրաշարժի ուղղակի վնասից/ազդեցությունից, ինչպիսին են հրդեհը, սողանքը և ազդեցությունները մարդու կյանքի վրա կամ տեխնոլոգիական վտանգները և այլն:</p>	<p>Вторичная опасность</p> <p>Бедствия, которые вызваны вследствие одного землетрясения или, которые причинены непосредственными воздействиями землетрясения, такие как пожар, оползень и воздействия на человеческую жизнь или техногенные бедствия.</p>	<p>Succeeding disasters</p> <p>Disasters that are generated following earthquake or that are caused by direct damage/impacts by an earthquake, such as fire, landslide and impacts on human life or technological hazards etc.</p>
<p>Աշխարհագրական տեղեկատվական համակարգ (USC)</p> <p>Վերլուծություն, որը միավորում է հարաբերական տվյալների բազաները տարածական մեկնաբանման և արդյունքների հետ, որոնք հաճախ լինում են քարտեզների տեսքով: Ավելի մանրամասն սահմանվում է որպես համակարգչային ծրագրեր, որոնք թույլ են տալիս հավաքել, պահել, ստուգել, ինտեգրել, վերլուծել և ցուցադրել Երկրի մասին տվյալները, որոնք տարածականորեն կոորդինատավորված են:</p> <p>Աշխարհագրական տեղեկատվական համակարգերը գնալով ավելի շատ են օգտագործվում վտանգի և խոցելիության քարտեզագրման և վերլուծության, ինչպես նաև աղետների ռիսկի կառավարման</p>	<p>Географические информационные системы (ГИС)</p> <p>Анализ, который объединяет соответственные базы данных с пространственной интерпретацией и их продуктом, чаще всего, в форме карт. Более разработанным является определение компьютерных программ: захвата, запоминания, проверки, интеграции, анализа и дисплея данных о земле, на которые ссылается с точки зрения пространства.</p> <p>Географические информационные системы постепенно становятся используемыми для составления карты опасности и уязвимости и для их анализа, а также для применения мер управления риском бедствий. Кроме того,</p>	<p>Geographic information systems (GIS)</p> <p>Analysis that combines relational databases with spatial interpretation and outputs often in form of maps. A more elaborate definition is that of computer programs for capturing, storing, checking, integrating, analyzing and displaying data about the earth that is spatially referenced.</p> <p>Geographical information systems are increasingly being utilized for hazard and vulnerability mapping and analysis, as well as for the application of disaster risk management measures. Also, GIS needs not only software and hardware, but also fundamental map data and thematic data.</p>

<p>միջոցառումների կիրառման համար: Բացի այդ, ԱՏՀ-ն կարիք ունի ոչ միայն ծրագրային ապահովման և սարքավորումների, այլև բազային քարտեզի և թեմատիկ տվյալների:</p>	<p>ГИС требует не только компьютерных программ и оборудования, но и данные о фундаментальных карт и тематические данные.</p>	
<p>Երկրաբանական վտանգ</p> <p>Երկրային բնական պրոցեսներ կամ երևույթներ, որոնք կարող են հանգեցնել կյանքի կորուտի կամ վնասվածքի, ունեցվածքի վնասի, սոցիալական և տնտեսական գործունեության խաթարման կամ էկոլոգիական վիճակի վատթարացման:</p> <p>Երկրաբանական վտանգը ներառում է երկրի ներքին գործընթացները կամ ունենում տեկտոնական ծագում, ինչպիսին են երկրաշարժերը, երկրաբանական խզվածքի ակտիվությունը, հեղուկացումը, ցունամիները, հրաբխային ակտիվությունը և արտանետումները, ինչպես նաև արտաքին գործընթացները, ինչպիսին են զանգվածային շարժումները. սողանք, լանջի փլուզում, քարաթափում, ձնահյուս, մակերևութային փլուզում, ուռչող գրունտներ և սելավ: Երկրաբանական</p>	<p>Геологическая опасность</p> <p>Естественные земные процессы или феномены, которые могут причинить потерю жизни или ущерб, экономический и социальный разрывы, или деградацию окружающей среды.</p> <p>Понятие «геологическая опасность» включает в себя внутренние земные процессы или тектоническое происхождение, такие как землетрясение, геологические разрывы, разжижение грунтов, цунами, вулканическая активность и эмиссия, а также внешние процессы, как движение масс: оползень, обвал, камнепад или снежная лавина, сползание откоса, экспансия земли и селевой или грязевой поток. Геологическая опасность может быть изолированной, последовательной или комбинированной в зависимости от происхождения и воздействий.</p>	<p>Geological hazard</p> <p>Natural earth processes or phenomena that may cause the loss of life or injury, property damage, social and economic disruption or environmental degradation.</p> <p>Geological hazard includes internal earth processes or tectonic origin, such as earthquakes, geological fault activity, liquefaction, tsunamis, volcanic activity and emissions as well as external processes such as mass movements: landslides, rockslides, rock falls or avalanches, surfaces collapses, expansive soils and debris or mud flows. Geological hazards can be single, sequential or combined in their origin and effects.</p>

<p>վտանգները կարող են լինել առանձին, հաջորդական կամ համակցված իրենց ծագմամբ և ազդեցություններով:</p>		
<p>Պատրաստվածություն</p> <p>Վտանգների ազդեցությանն արդյունավետ արձագանքելու նպատակով նախապես ձեռնարկվող գործողություններ և միջոցառումներ, ներառյալ ժամանակին և արդյունավետ վաղ ազդարարում և վտանգված վայրերից մարդկանց և գույքի կանխարգելիչ տարահանումը:</p>	<p>Готовность</p> <p>Деятельность и меры, принятые заранее в целях обеспечить эффективное реагирование на воздействие стихийных бедствий, включая выпуск раннего и эффективного оповещения и осуществление заблаговременного перемещения населения и имущества из места угрозы возникновения чрезвычайной ситуации.</p>	<p>Preparedness</p> <p>Activities and measures taken in advance to ensure effective response to the impact of hazards, including the issuance of timely and effective early warnings and the preventive evacuation of people and property from threatened locations.</p>
<p>Քաղաքացիական պաշտպանություն</p> <p>Կառավարման մարմինների պետական համակարգ և կառավարության կողմից ձեռնարկվող միջոցառումների ամբողջություն, որոնք իրականացվում են խաղաղ և պատերազմական ժամանակներում՝ ժողովրդին, ազգային տնտեսության օբյեկտները և երկրի տարածքը ժամանակակից զենքերի, բնական և տեխնաձին աղետների վնասակար գործոնների ազդեցությունից պաշտպանելու համար:</p>	<p>Гражданская оборона</p> <p>Система органов и общегосударственных мероприятий, проводимых в мирное и военное время в интересах защиты населения, объектов экономики и территории страны от чрезвычайных ситуаций и применения современных средств поражения.</p>	<p>Civil defense</p> <p>A state system of managerial bodies and an aggregate of governmental events carried out in peaceful and war time to protect the people, national economics objects and country's territory from the impact of damaging factors of modern weapons, natural and manmade disasters.</p>

<p>Ընդունելի ռիսկ</p> <p>Վորստի մակարդակ, որը հասարակությունը կամ համայնքը համարում է ընդունելի սովյալ առկա սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային, տեխնիկական և էկոլոգիական պայմաններում:</p>	<p>Допустимый риск</p> <p>Степень ущерба, которую общество либо сообщество считает приемлемым в данной социальной, экономической, политической, культурной, технической и экологической обстановках.</p>	<p>Acceptable risk</p> <p>The level of loss which a society or a community considers acceptable in a given existing social, economic, political, cultural, technical and environmental conditions.</p>
<p>Մագնիտուդ</p> <p>Երկրաշարժի օջախի կողմից արձակված ընդհանուր էներգիայի անչափ մեծություն: Կան մի քանի տեսակի մեծություններ, ինչպիսին են Մակերևութային ալիքների մագնիտուդը, սեյսմիկ մոմենտը և այլն:</p>	<p>Магнитуда</p> <p>Безразмерная величина общей энергии, выпускаемой очагом землетрясения. Имеются разные виды магнитуды, как, например, магнитуда по Рихтеру, моментная магнитуда и т.д.</p>	<p>Magnitude</p> <p>Dimensionless quantity of the total energy released by an earthquake source. There are several types of magnitudes, such as a Surface wave magnitude, Moment magnitude etc.</p>
<p>Կանխարգելիչ միջոցառումներ</p> <p>Բոլոր միջոցառումները, որոնք ձեռնարկվում են աղետներին և դիսկերին հակազդման և դրանց նվազեցման համար: Դրանք առավել հաճախ վերաբերում են ինժեներական (կառուցվածքային) միջոցառումներին, բայց կարող են ներառել նաև ոչ-կառուցվածքային միջոցառումներ, գործիքներ կամ մարդկային գործողություններ, որոնք նախազգվում և կիրառվում են բնական վտանգների և առնչվող էկոլոգիական ու տեխնոլոգիական</p>	<p>Меры противодействия / Меры</p> <p>Всекие меры, принятые с целью противодействия и уменьшения бедствий и риска. Они обычно относятся к техническим (структурным) мерам, а также они могут включать в себя неструктурные меры, средства и деятельность человека, разработанные и применяемые для того, чтобы избежать или ограничить неблагоприятные воздействия стихийных бедствий и связанных с ними экологических и техногенных катастроф.</p>	<p>Countermeasures (Measures)</p> <p>All measures taken to counter and to reduce disaster and risk. They most commonly refer to engineering (structural) measures, but can also include non-structural measures, tools or human activities designed and employed to avoid or limit the adverse impact of natural hazards and related environmental and technological disasters.</p>

<p>աղետների բացասական ազդեցությունից խուսափելու կամ այն սահմանափակելու համար:</p>		
<p>Մեղմացում / նվազեցում</p> <p>Կառուցվածքային և ոչ-կառուցվածքային միջոցառումներ, որոնք ձեռնարկվում են բնական վտանգների, էկոլոգիական իրավիճակի վատթարացման և տեխնոլոգիական վտանգների բացասական ազդեցությունը սահմանափակելու համար:</p>	<p>Митигация / сокращение</p> <p>Структурные и неструктурные меры, принятые, чтобы ограничить негативные воздействия опасности стихийного и техногенного характера, деградацию окружающей среды.</p>	<p>Mitigation / Reduction</p> <p>Structural and non-structural measures undertaken to limit the adverse impact of natural hazards, environmental degradation and technological hazards.</p>
<p>Երկրաշարժ / սեյսմիկ վտանգ / սեյսմիկ ռիսկ</p> <p>Երկրաշարժը գետնի և երկրակեղևի ցնցումն է, որն առաջանում է խզվածքի ակտիվացման և տեկտոնական ակտիվության հետևանքով, իսկ սեյսմիկ վտանգը նկարագրում է որոշակի կետում սպասվող ազդեցությունները (հնտենսիվությունը բալերով) և որոշակի ժամանակահատվածում դրանց առաջացման հավանականությունը: Սեյսմիկ ռիսկը որոշակի ժամանակահատվածում որոշակի տարածքում հնարավոր երկրաշարժերի հետևանքով առաջացած կորուստների հավանական քանակն է (զոհեր,</p>	<p>Землетрясение / Сейсмическая опасность / Сейсмический риск</p> <p>Землетрясение представляет собой колебание земли и земной коры, причиненное сбросовым разрывом и тектонической активностью, а сейсмическая опасность характерна для воздействий (интенсивности в баллах), ожидаемых в определенном пункте и вероятности их происхождения за определенный период ожидания. Сейсмический риск – это вероятное число потерь (человеческие жертвы, раненные,</p>	<p>Earthquake / Seismic hazard / Seismic risk</p> <p>Earthquake is shaking of the ground and earth's crust caused by fault rupture and tectonic activities, and seismic hazard is characteristic of impacts (intensity in scores) anticipated in a specific point and probability of their origination over a certain period of anticipation. Seismic risk is probable number of losses (death of people, injured, material damage) on a specific territory over a set timeframe due to potential earthquakes.</p>

<p>վիրավորներ, նյութական վնասներ):</p>	<p>имущественный ущерб) в определенной территории в определенной временной рамке из-за потенциальных землетрясений.</p>	
<p>Օգնություն (որոնողափրկարարական աշխատանք)</p> <p>Աղետի ժամանակ կամ դրանից անմիջապես հետո օգնության տրամադրում կամ միջամտություն՝ տուժած մարդկանց կյանքի պահպանման և կենսապահովման հիմնական կարիքների բավարարման համար: Այն կարող է լինել անհապաղ, կարճաժամկետ կամ երկարատև:</p>	<p>Оказание помощи (поиск и спасение)</p> <p>Предоставление поддержки или воздействия во время бедствия или сразу после него, чтобы защитить жизнь населения и соответствовать базовым средствам существования пострадавших. Это может быть экстренным, краткосрочным и долгосрочным.</p>	<p>Relief (Search and rescue)</p> <p>The provision of assistance or intervention during or immediately after a disaster to meet the life preservation and basic subsistence needs of those people affected. It can be of an immediate, short term, or protracted duration.</p>
<p>Վտանգ</p> <p>Պոտենցիալ վնասակար ֆիզիկական իրադարձություն, երևույթ կամ մարդկային գործունեություն, որը կարող է հանգեցնել կյանքի կորստի կամ վնասվածքի, ունեցվածքի վնասի, սոցիալական և տնտեսական գործունեության խաթարման կամ էկոլոգիական իրավիճակի վատթարացման:</p> <p>Վտանգները կարող են ներառել թաքնված վիճակներ, որոնք կարող են ներկայացնել ապագա սպառնալիքներ և</p>	<p>Опасность</p> <p>Физическое явление, феномен или деятельность человека, которые могут причинить человеческие жертвы, имущественный ущерб, социальный и экономический разрыв или деградацию окружающей среды.</p> <p>Понятие «опасность» может включать в себя потенциальное состояние, которое может отражать будущую угрозу и может иметь разные происхождения:</p>	<p>Hazard</p> <p>A potentially damaging physical event, phenomenon or human activity that may cause the loss of life or injury, property damage, social and economic disruption or environmental degradation.</p> <p>Hazards can include latent conditions that may represent future threats and can have different origins: natural (geological, hydro-meteorological and</p>

<p>կարող են ունենալ տարբեր ծագում՝ բնական (երկրաբանական, հիդրոդերևութաբանական և կենսաբանական) կամ լինել մարդկային գործունեության արդյունք (էկոլոգիական իրավիճակի վատթարացում և տեխնոլոգիական վտանգներ): Վտանգները կարող են լինել առանձին, հաջորդական կամ համակցված իրենց ծագմամբ և ազդեցություններով: Յուրաքանչյուր վտանգ բնութագրվում է իր տեղադրությամբ, ինտենսիվությամբ, հաճախականությամբ և հավանականությամբ:</p>	<p>естественные (геологические, гидрометеорологические и биологические) или причиненные человеческим процессом (деградация окружающей среды и техногенные опасности). Опасности могут быть изолированными, последующими или скомбинированными с точки зрения происхождения и воздействий.</p> <p>Каждую опасность характеризуют локальность, интенсивность, частотность и потенциальность.</p>	<p>biological) or induced by human processes (environmental degradation and technological hazards). Hazards can be single, sequential or combined in their origin and effects. Each hazard is characterized by its location, intensity, frequency and probability.</p>
<p>Հանրային իրազեկում</p> <p>Բնակչությանը իրազեկելու, ռիսկերի մասին գիտակցության մակարդակը բարձրացնելու, իրենց վրա վտանգների ազդեցությունը նվազեցնելու նպատակով վարքականոններ սովորեցնելու գործընթացներ: Սա հատկապես կարևոր է պետական պաշտոնյաների համար՝ աղետի դեպքում կյանքեր և ունեցվածք փրկելու իրենց պարտականությունները կատարելու հարցում: Հանրային իրազեկման միջոցառումները նպաստում են վարքագծի</p>	<p>Осведомленность населения</p> <p>Процессы информирования всех слоев населения, повышая степень сознательности о рисках и о том, как люди могут действовать, чтобы уменьшить их подвергание опасностям. Это особенно важно для государственных служащих при выполнении ими обязанностей по спасению жизни и имущества при происхождении бедствий.</p> <p>Деятельность по информированности</p>	<p>Public awareness</p> <p>The processes of informing the general population, increasing levels of consciousness about risks and how people can act to reduce their exposure to hazards. This is particularly important for public officials in fulfilling their responsibilities to save lives and property in the event of a disaster. Public awareness activities foster changes in behavior leading towards a culture of risk</p>

<p>փոփոխություններին, որոնք տանում են դեպի ռիսկերի նվազեցման մշակույթ: Սա ներառում է հանրային տեղեկատվությունը, տարածումը, կրթությունը, ուղիղ կամ հեռուստատեսային հեռարձակումները, տպագիր մամուլի օգտագործումը, ինչպես նաև տեղեկատվական կենտրոնների/ցանցերի ստեղծումը և համայնքային մասնակցության խթանումը:</p>	<p>населения способствуют изменению в поведених, ведущих к культуре сокращения риска. В этом содержатся информация населению, ее распространение, образование, программы радио или телевидения, печатные СМИ, а также создание информационных центров и сети и поощрение деятельности на уровне сообществ и с активным участием населения.</p>	<p>reduction. This involves public information, dissemination, education, radio or television broadcasts, use of printed media, as well as the establishment of information centers / networks and community participation actions.</p>
<p>Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (ՇՄԱԳ)</p> <p>Ուսումնասիրություններ, որոնք կատարվում են որոշակի միջավայրի վրա որևէ նոր գործոնի ներդրման ազդեցությունը գնահատելու նպատակով, որը կարող է խախտել ներկայիս էկոլոգիական հավասարակշռությունը:</p>	<p>Оценка воздействия на окружающую среду (ОВОС)</p> <p>Исследования, предпринятые с целью оценивать эффект на введение в определенную окружающую среду новых факторов, которые могут опрокинуть текущий экологический баланс.</p>	<p>Environmental impact assessment (EIA)</p> <p>Studies undertaken in order to assess the effect on a specified environment of the introduction of any new factor, which may upset the current ecological balance.</p>
<p>Վտանգի գնահատում (վտանգի վերլուծություն)</p> <p>Յանկացած վտանգի նույնականացում, ուսումնասիրություն և մոնիթորինգ՝ դրա ներուժը, ծագումը, առանձնահատկությունները և պահվածքը որոշելու համար:</p>	<p>Оценка (анализ) опасности</p> <p>Идентификация, исследование и мониторинг всякого рода опасности с целью определить ее потенциальность, происхождение, характеристику и поведение.</p>	<p>Hazard assessment (Hazard analysis)</p> <p>Identification, studies and monitoring of any hazard to determine its potential, origin, characteristics and behavior.</p>

<p>Ռիսկի գնահատում (ռիսկի վերլուծություն)</p> <p>Ռիսկի բնույթն ու չափը որոշելու մեթոդաբանություն՝ վերլուծելով պոտենցիալ վտանգները և գնահատելով խոցելիության առկա պայմանները, որոնք կարող են պոտենցիալ սպառնալիք հանդիսանալ կամ վնաս պատճառել մարդկանց, գույքին, ապրուստի միջոցներին և շրջակա միջավայրին, որից նրանք կախված են:</p>	<p>Оценка (анализ) риска</p> <p>Методология определения характера и степени риска с помощью анализа потенциальной опасности и оценки существующих состояний уязвимости, которые могли бы причинить угрозу и ущерб населению, имуществу, средствам существования и окружающей среде, от которой они зависят.</p>	<p>Risk assessment (Risk analysis)</p> <p>A methodology to determine the nature and extent of risk by analyzing potential hazards and evaluating existing conditions of vulnerability that could pose a potential threat or harm to people, property, livelihoods and the environment on which they depend.</p>
<p>Վնասի և կորստի գնահատում</p> <p>Շինություններին, այդ թվում՝ շենքերին, ենթակառուցվածքներին, կենսապահովման օբյեկտներին, հնչալես նաև մարդկանց կամ հասարակությանը հասցվող, հնչալես նաև երկրորդային վնասների (օրինակ՝ հրդեհ) ուղղակի և անուղղակի վնասների, ազդեցությունների կամ գործառույթների ընդհատման գնահատում: Կորուստների գնահատումը ներառում է դրամական կորուստները, հոգեբանական ազդեցությունները, վիրավորների բուժումը, վտանգավոր թափոնների մշակումը և այլն:</p>	<p>Оценка ущерба и потери</p> <p>Оценка непосредственного и косвенного ущерба, воздействия либо прекращения функциональности, нанесенных структуре, включая здания, инфраструктуру, жизнеобеспечивающие коммуникации, удобства, а также ущерба людям и обществу как жертвы катастроф, прекращения жизненного цикла и последующего вторичного фактора как пожар. Понятие «оценка потери» включает в себя денежную потерю, моральный ущерб, необходимые реагирования к травме, вредным отходам и т.п.</p>	<p>Damage and loss assessment</p> <p>Estimation of direct and indirect damage, impacts or suspension of functionalities to structures including building, infrastructure, lifeline facilities, and to human or society such as casualties, life suspension, and also succeeding damage such as fire. Loss estimation includes monetary loss, psychological effects, necessary response to injuries hazardous waste, etc.</p>

Հողօգտագործման պլանավորում

Ֆիզիկական և սոցիալ-տնտեսական պլանավորման ճյուղ, որը որոշում է միջոցները և գնահատում է զանազան տարբերակների արժեքները կամ սահմանափակումները, որոնցով պետք է օգտագործվի հողը՝ բնակչության տարբեր հատվածների կամ համայնքի շահերի վրա համապատասխան ազդեցություններով, որոնք հաշվի են առնվում որոշումների կայացման ժամանակ:

Հողօգտագործման պլանավորումը ներառում է ուսումնասիրություններ և քարտեզագրում, շրջակա միջավայրի և վտանգի վերաբերյալ տվյալների վերլուծություն, հողօգտագործման այլընտրանքային որոշումների ձևակերպում և տարբեր աշխարհագրական ու վարչական մասշտաբների համար երկարաժամկետ պլանի նախագծում:

Հողօգտագործման պլանավորումը կարող է օգնել մեղմել աղետները և նվազեցնել ռիսկերը չխրախուսելով բարձր խտությամբ բնակավայրերը և վտանգավոր վայրերում հիմնական

Планирование землепользования

Отрасль физического и социально-экономического планирования, которая определяет средства, а также оценку или ограничения разных вариантов используемых местностей с соответствующими воздействиями на различные слои населения или интересы сообщества, учитываемые при принятии решения.

Понятие «планирование землепользования» включает в себя исследования и картирование, анализ данных окружающей среды и опасности, формулирование альтернативных решений по землепользованию и проектирование долгосрочных планов по разным географическим и административным нормам.

Планирование землепользования может способствовать ликвидации бедствий и сокращению риска заселения высокой плотности населения и строительства ключевых сооружений в потенциально опасных местах, контроль плотности населения и ее расширения, и в расположении маршрутов обслуживания для транспорта, электричества, воды, сточных вод и других ключевых удобств.

Land-use planning

Branch of physical and socio-economic planning that determines the means and assesses the values or limitations of various options in which land is to be utilized, with the corresponding effects on different segments of the population or interests of a community taken into account in resulting decisions.

Land-use planning involves studies and mapping, analysis of environmental and hazard data, formulation of alternative land-use decisions and design of a long-range plan for different geographical and administrative scales.

Land-use planning can help to mitigate disasters and reduce risks by discouraging high-density settlements and construction of key installations in hazard-prone areas, control of population density and expansion, and in the siting of service routes for transport, power, water, sewage and other critical facilities.

<p>կայանքների կառուցումը, և վերահսկելով բնակչության խտությունն ու ընդլայնումը, ինչպես նաև ճիշտ որոշելով տրանսպորտի, էլեկտրաէներգիայի, ջրի, կոյուղու և այլ կարևորագույն օբյեկտների սպասարկման ուղիների վայրերը:</p>		
<p>Երկրաշարժի կանխատեսում / Երկրաշարժի գնահատում</p> <p>Երկրաշարժի կանխատեսումը ապագա երկրաշարժերի առաջացման հստակ պնդում է: Այն ներառում է ապագա սեյսմիկ երևույթի ժամանակը, գտնվելու վայրը և ուժը: Ընդհանրապես համարվում է, որ արդի գիտական տեխնոլոգիաներով հնարավոր չէ հստակ կանխատեսել:</p> <p>Երկրաշարժի գնահատումը որոշակի տարածքում կամ որոշակի խզվածքի համար որոշակի ժամանակահատվածում երկրաշարժի առաջացման հավանականության վիճակագրական գնահատումն է:</p>	<p>Предсказание землетрясения / Прогнозирование землетрясения</p> <p>Точное утверждение или статистическое предположение о будущем возникновении землетрясения. Включает время, место и силу будущего землетрясения. Считается, что точное предсказание землетрясений на современном научном уровне невозможно.</p> <p>Прогнозирование землетрясения – статистическое предположение о возникновении землетрясения в определённом месте, в определённом разломе и в определённый промежуток времени на основе данных о прошлых землетрясениях и данных о движении коры земли.</p>	<p>Earthquake forecast (Earthquake prediction) / Earthquake estimation</p> <p>Earthquake forecast is definite statement of the occurrence of a future event of earthquakes. It includes time, location and force of a future seismic phenomenon. It is generally considered that affirmative forecast/prediction is not possible with modern scientific technology.</p> <p>Earthquake estimation is statistical estimation of probability of occurrence of an earthquake in a certain area or for a certain fault for a certain period of time.</p>

<p>Կանխարգելում</p> <p>Վտանգի բացասական ազդեցության բացառմանն ուղղված գործողություններ և դրան առնչվող էկոլոգիական, տեխնոլոգիական ու կենսաբանական աղետները նվազագույնի հասցնելու միջոցներ:</p>	<p>Предупреждение</p> <p>Деятельность в целях устранения полностью негативных воздействий бедствия и меры с целью уменьшения связанных с ними бедствий природного, техногенного и биологического характера.</p>	<p>Prevention</p> <p>Activities to provide outright avoidance of the adverse impact of hazards and means to minimize related environmental, technological and biological disasters.</p>
<p>Վաղ ազդարարում</p> <p>Ժամանակին և արդյունավետ տեղեկատվության տրամադրում՝ սահմանված հաստատությունների միջոցով, որը թույլ է տալիս վտանգի ենթարկված անհատներին միջոցներ ձեռնարկել՝ ռիսկից խուսափելու կամ այն նվազեցնելու, ինչպես նաև արդյունավետ արձագանքմանը պատրաստվելու համար:</p>	<p>Раннее оповещение</p> <p>Предоставление заблаговременной и эффективной информации через установленные институты, которое позволяет индивиду, незащищенного от опасности принимать меры, способствующие предотвращению либо сокращению риска, также подготовке к эффективно-му реагированию.</p>	<p>Early warning</p> <p>The provision of timely and effective information, through identified institutions, that allows individuals exposed to a hazard to take action to avoid or reduce their risk and prepare for effective response.</p>
<p>Վերականգնում / վերակառուցում</p> <p>Աղետից հետո ընդունված որոշումներ և գործողություններ, որոնց նպատակն է վերականգնել կամ բարելավել աղետից տուժած համայնքի՝ մինչև աղետը գոյություն ունեցած կենսապայմանները՝ միաժամանակ խրախուսելով և նպաստելով աղետի ռիսկի նվազեցման համար անհրաժեշտ կարգավորումները:</p>	<p>Реабилитация / реконструкция</p> <p>Решения и действия, принятые после стихийного бедствия в целях восстановить или улучшить условия жизни до той степени, когда еще не происходило бедствие, поощряя и способствуя необходимому регулированию для сокращения риска бедствия.</p>	<p>Rehabilitation / Reconstruction</p> <p>Decisions and actions taken after a disaster with a view to restoring or improving the pre-disaster living conditions of the stricken community, while encouraging and facilitating necessary adjustments to reduce disaster risk.</p>

<p>Արձագանքումն ԱԻ-ին</p> <p>Արտակարգ իրավիճակների բոլոր ասպեկտների, մասնավորապես՝ պատրաստվածության, օգնության և վերականգնման համար ռեսուրսների և պարտականությունների կազմակերպում և կառավարում:</p> <p>Արտակարգ իրավիճակների կառավարումը կարող է ներառել վտանգի և աղետի նույնականացում, որոնողափրկարարական աշխատանքներ և այլն:</p>	<p>Реагирование на ЧС</p> <p>Организация и управление ресурсами и ответственностью для того чтобы разобраться со всеми аспектами чрезвычайных ситуаций, в частности, готовностью, оказанием помощи и реабилитацией.</p> <p>Понятие «реагирование на ЧС» включает в себя опасность и идентификацию бедствий, поисково-спасательную операцию и т.д.</p>	<p>Emergency response</p> <p>The organization and management of resources and responsibilities for dealing with all aspects of emergencies, in particularly preparedness, relief and rehabilitation. Emergency management may include hazard and disaster identification, search and rescue and so on.</p>
<p>Ռիսկ</p> <p>Բնական կամ մարդածին վտանգների և խոցելի պայմանների փոխազդեցության արդյունքում առաջացող վնասակար հետևանքների կամ կանխատեսվող կորուստների (մահ, վնասվածք, գույքի, ապրուստի միջոցների կորուստ, տնտեսական գործունեության խաթարում կամ վնաս շրջակա միջավայրին) հավանականությունը:</p> <p>Ռիսկը պայմանականորեն արտահայտվում է հետևյալ կերպ.</p> <p><i>Ռիսկ = Վտանգներ x խոցելիություն</i></p>	<p>Риск</p> <p>Вероятность вредных последствий, или предполагаемые потери (смерть, ранение, имущественный ущерб, жизненные потери, разрушенные экономические деятельности, поврежденная окружающая среда), которые являются результатом взаимодействий между опасностями природного или техногенного характера и уязвимыми условиями.</p>	<p>Risk</p> <p>The probability of harmful consequences, or expected losses (deaths, injuries, property, livelihoods, economic activity disrupted or environment damaged) resulting from interactions between natural or human-induced hazards and vulnerable conditions.</p> <p>Conventionally risk is expressed by the notation;</p> <p><i>Risk = Hazards x Vulnerability.</i></p>

<p>Որոշ դիսցիպլինաներ ներառում են նաև ազդեցության ենթարկվելու գաղափարը՝ հատկապես խոցելիության ֆիզիկական ասպեկտներին անդրադառնալու համար: Ֆիզիկական վնասի հավանականությունն արտահայտելուց բացի, կարևոր է գիտակցել, որ ռիսկերը բնորոշ են կամ կարող են ստեղծվել կամ գոյություն ունենալ սոցիալական համակարգերում: Կարևոր է հաշվի առնել այն սոցիալական համատեքստերը, որոնցում առաջանում են ռիսկեր, և որ մարդիկ միշտ չէ, որ կիսում են ռիսկի և դրա հիմքում ընկած պատճառների նույն պատկերացումները:</p>	<p>Риск условно выражается следующим образом:</p> <p><i>Риск = Опасность х Уязвимость</i></p> <p>Некоторые дисциплины включают в себя понятие возможного подвержения ущербу, упоминающего, в частности, о уязвимости физических аспектов. Кроме того, как выражать вероятность физических повреждений, следует учесть, что риски являются врожденными, иначе говоря, могут быть созданы или существовать в пределах социальных систем. Важно учесть социальные контексты, в которых происходят риски, а также, что люди и потому же необязательно разделяют то же самое восприятие риска и их основных причин.</p>	<p>Some disciplines also include the concept of exposure to refer particularly to the physical aspects of vulnerability. Beyond expressing a possibility of physical harm, it is crucial to recognize that risks are inherent or can be created or exist within social systems. It is important to consider the social contexts in which risks occur and that people therefore do not necessarily share the same perceptions of risk and their underlying causes.</p>
<p>Երկրաշարժի ինտենսիվություն</p> <p>Գոյություն ունեն երկրաշարժի ինտենսիվության տարբեր սանդղակներ, որոնք ցույց են տալիս երկրաշարժի հետևանքով առաջացած ցնցումների ազդեցության ուժգնությունը: Երկրաշարժի ինտենսիվության սանդղակի օրինակ է</p>	<p>Сейсмическая интенсивность</p> <p>Существуют разные шкалы интенсивности землетрясения, которые показывают интенсивность трясения, причиненного землетрясением. Приводим пример шкалы интенсивности землетрясения MSK-64: 1 балл – неощутимое землетрясение;</p>	<p>Seismic intensity</p> <p>There are various seismic intensity scales that show the impact intensity of shaking caused by an earthquake. An example of Seismic intensity scale MSK-64 – I score – impalpable earthquake; II scores – barely palpable</p>

<p>MSK-64–ը, որում երկրաշարժի ինտենսիվությունը նկարագրվում է հետևյալ կերպ. 1 բալ – չզգացվող երկրաշարժ, 2 բալ – հազիվ զգացվող երկրաշարժ, 3 բալ – թույլ ցնցում, 4 բալ – զգալի ցնցում, 5 բալ (թույլ երկրաշարժ) – փոքր ճաքեր շենքի սվաղում, 6 բալ (ուժեղ երկրաշարժ) – ահաբեկված մարդիկ, աղյուսե և կավե շինությունների վրա առաջացել են թեթև ճաքեր, 7 բալ (շատ ուժեղ երկրաշարժ) – աղյուսե և կավե շինություններին հասցվել է վնաս, 8 բալ (ավերիչ երկրաշարժ) – շենքերին հասցվել է մեծ վնաս, վախ և խուճապ մարդկանց շրջանում, 9 բալ (կործանարար երկրաշարժ) – շենքերի համընդհանուր վնաս, կավե շենքերի ամբողջական փլուզում, պանելային շենքերում պատերի ճեղքեր, գետնի մինչև 10 սմ ճեղքեր, 10 բալ (ոչնչացնող երկրաշարժ) – շենքերի ընդհանուր ավերածություն, երկաթգծի շեղում, պատվարների վտանգավոր վնաս, 11 բալ – աղետ, հողի զգալի դեֆորմացիա, 12 բալ – գլոբալ աղետ, ռելիեֆի արմատական փոփոխություն:</p>	<p>2 балла – едва ощутимое; 3 балла – слабое; 4 балла – заметное сотрясение; 5 баллов (слабое землетрясение) – мелкие трещины на стеной штукатурке; 6 баллов (сильное землетрясение) – испуг; кирпичные и глинобитные дома имеют немного трещин; 7 баллов (очень сильное землетрясение) – кирпичным и глинобитным домам нанесены повреждения; 8 баллов (разрушительное землетрясение) – сильное повреждение зданий, испуг и паника у населения; 9 баллов (уничтожающее землетрясение) – всеобщее повреждение зданий, абсолютное разрушение глинобитных зданий, трещины по всей стене панельных зданий, почвенные трещины до 10 сантиметров, 10 баллов (опустошительное землетрясение) – всеобщее разрушение зданий, отклонение железнодорожного пути, опасное повреждение плотин; 11 баллов: катастрофа, значительная деформация почвы; 12 баллов: глобальная катастрофа, радикальные изменения рельефа.</p>	<p>earthquake; III scores – weak earthquake; IV scores – palpable shaking; V scores (weak earthquake) – thin cracks in building’s plaster, VI scores (strong earthquake) – people are frightened; bricked and cob buildings are slightly cracked; VII scores (very strong earthquake) – bricked and cob buildings are damaged; VIII scores (destructive earthquake) – major damage of buildings, fear and panic among people; IX scores (devastating earthquake) overall damage of buildings, complete destruction of cob buildings, through-wall cracks in panel buildings, up to 10 cm ground cracks; X scores (exterminating earthquake) – overall destruction of buildings, railway deviation, hazardous damage of dams; XI scores: catastrophe, significant ground deformation; XII scores: global catastrophe, radical relief change.</p>
---	--	---

<p>Երկրաշարժի օջախ</p> <p>Երկրաշարժի օջախները հիմնականում ակտիվ խզվածքներ և տեկտոնական կառուցվածքներ են, իսկ օջախային գոտին երկրակեղևում էներգիա պարունակող բեկվածքի կամ մի քանի ակտիվ բեկվածքների տեղակայումն է, որոնց շարժումը հանգեցնում երկրակեղևում առկա լարվածության արձակմանը և սեյսմիկ ալիքների առաջացմանը:</p>	<p>Сейсмический источник</p> <p>Сейсмический источник является активным действующим сбросом и тектонической структурой, а зона сейсмического источника – это место, где на земной коре выделяющая энергию трещина или множество действующих трещин, движение которых заставляет выпускать напряженность внутри коры и вызывает сейсмические волны.</p>	<p>Seismic Sources</p> <p>Seismic sources are mainly active faults and tectonic structures, and its source zone is the location of energized fracture or a number of active fractures in the earth's crust, movement along which cause intra-crust tension to release and seismic waves to originate.</p>
<p>Սեյսմիկություն</p> <p>Երկրաշարժի ծագման ամբողջություն, որը բնութագրվում է իր դիրքով, ժամանակի ընթացքում տարբեր ուժգնությամբ իրադարձությունների կրկնությամբ, վնասների և դեֆորմացիաների տեսակներով, երկրաշարժի օջախի և երկրաբանական կառուցվածքի միջև կապով:</p>	<p>Сейсмичность</p> <p>Совокупность происхождений землетрясения, характеризованного их местоположением, повторяемостью аварий с разной силой в пределах определенного времени, типов воздействий и деформации, связь фокуса землетрясения с геологическим составом.</p>	<p>Seismicity</p> <p>An aggregate of earthquake originations characterizing by their square location, repetition of events of various force in time, types and square of damages and deformations, connection of earthquake focuses with geological composition.</p>
<p>Սեյսմիկ ամրացում</p> <p>Կառույցների ամրացում՝ երկրաշարժի վտանգի նկատմամբ դրանք ավելի դիմացկուն և կայուն դարձնելու համար:</p> <p><i>Ամրացումը ներառում է նյութերի զանգվածի, կոշտության, մարման, բեռնվածքի ուղղու և կոնիության փոփոխություններ, ինչպես նաև</i></p>	<p>Сейсмоукрепление</p> <p>Подкрепление структур, чтобы сделать их более прочными и устойчивыми к силам стихийных бедствий.</p> <p>Понятие «модернизация» содержит рассмотрение изменений в массе, крепкости, глушении трясения, пути нагружения и гибкости материалов,</p>	<p>Retrofitting (Retrofit) (Seismic retrofitting)</p> <p>Reinforcement of structures to become more resistant and resilient to the forces of earthquake hazards.</p> <p><i>Retrofitting involves consideration of changes in the mass, stiffness, damping, load path and ductility of</i></p>

<p>արմատական փոփոխություններ, հնչափսին են էներգիա կլանող մարիչների և հիմքի մեկուսիչների ներդրումը:</p>	<p>а также радикальное изменение, как, например, введение энергопоглощающих амортизаторов и систем виброизоляции основания.</p>	<p><i>materials, as well as radical changes such as the introduction of energy absorbing dampers and base isolation systems.</i></p>
<p>Բնական վտանգ</p> <p>Բնական պրոցեսներ կամ երևույթներ, որոնք տեղի են ունենում կենսոլորտում և կարող են վնասներ հասցնել:</p> <p>Բնական վտանգները կարող են դասակարգվել ըստ ծագման. երկրաբանական, հիդրոօդերևութաբանական կամ կենսաբանական: Վտանգավոր իրադարձությունները կարող են տարբերվել մագնիտուդով, ուժգնությամբ, հաճախականությամբ, տևողությամբ, մասշտաբով, սկզբնական արագությամբ, տարածական և ժամանակային բաշխվածությամբ:</p>	<p>Стихийные бедствия</p> <p>Природные процессы или явления, происходящие в биосфере, которые могут причинить ущерб.</p> <p>Стихийные бедствия могут классифицироваться по их происхождению, например, геологические, гидро–метеорологические или биологические. Опасные явления могут варьироваться по магнитуде, интенсивности, частоте, длительности, степени, началу скорости, пространственному рассредоточению и временному интервалу.</p>	<p>Natural hazards</p> <p>Natural processes or phenomena occurring in the biosphere that may constitute a damaging event.</p> <p>Natural hazards can be classified by origin namely: geological, hydro–meteorological or biological. Hazardous events can vary in magnitude or intensity, frequency, duration, area of extent, speed of onset, spatial dispersion and temporal spacing.</p>
<p>Շինարարական նորմեր</p> <p>Օրենքներ և կանոններ, որոնք կարգավորում են ցանկացած կառույցի (հնչափսին են շենքերը, ենթակառուցվածքները և կենսապահովման համակարգերը) նախագծումը, շինարարությունը, նյութերը, փոփոխությունները և բնակեցումը՝ մարդկանց անվտանգությունն ու բարեկեցությունն ապահովելու նպատակով:</p>	<p>Строительные нормы и правила (СНиП)</p> <p>Законы и правила, регулирующие дизайн, конструкцию, материалы, перестройку и помещения всякого рода структуры, таких как здания, инфраструктуры, жизнеобеспечивающие коммуникации, с целью обеспечения безопасности и благосостояния</p>	<p>Building codes (Seismic building codes) (SNiP)</p> <p>Ordinances and regulations controlling the design, construction, materials, alteration and occupancy of any structure such as buildings, infrastructures and lifeline facilities to</p>

<p>Շինարարական նորմերը ներառում են ինչպես տեխնիկական, այնպես էլ գործառական ստանդարտներ:</p>	<p>человека. СНиП включают в себя как техническую, так и функциональную норму.</p>	<p>insure human safety and welfare. Building codes include both technical and functional standards.</p>
<p>Կառուցվածքային միջոցառումներ / Ոչ-կառուցվածքային միջոցառումներ</p> <p>Կառուցվածքային միջոցառումները վերաբերում են ցանկացած ֆիզիկական շինարարության, որի նպատակն է նվազեցնել կամ կանխարգելել վտանգների հնարավոր ազդեցությունները: Դրանք ներառում են ինժեներական միջոցառումները և վտանգի նկատմամբ դիմացկուն և պաշտպանիչ կառուցների ու ներակառուցվածքների կառուցումը:</p> <p>Ոչ-կառուցվածքային միջոցառումները վերաբերում են քաղաքականությանը, իրազեկմանը, գիտելիքների զարգացմանը, բնակչության ներգրավվածությանը, ինչպես նաև մեթոդներին ու շահագործման պրակտիկաներին, ներառյալ հանրության մասնակցության մեխանիզմները և տեղեկատվության տրամադրումը, որոնք կարող են նվազեցնել ռիսկերը և հարակից ազդեցությունները:</p>	<p>Структурные меры / неструктурные меры</p> <p>Структурные меры относятся к любой физической структуре в целях сокращения или предотвращения возможных опасностей, в которую включают инженерные меры, конструкция защитных структур и инфраструктур, стойких к опасностям.</p> <p>Неструктурные меры относятся к политике, осведомленности, развитию знания, вовлеченности населения и методам эксплуатации, включая механизмы общественного участия и предоставление информации, которые могут способствовать сокращению риска и связанных с ним воздействий.</p>	<p>Structural measures / Non-structural measures</p> <p>Structural measures refer to any physical construction to reduce or avoid possible impacts of hazards, which include engineering measures and construction of hazard-resistant and protective structures and infrastructure.</p> <p>Non-structural measures refer to policies, awareness, knowledge development, public commitment, and methods and operating practices, including participatory mechanisms and the provision of information, which can reduce risk and related impacts.</p>

<p>Երկրաշարժի սցենար</p> <p>Երևույթը և այն, ինչ ժամանակի ընթացքում տեղի կունենա երկրաշարժից հետո (վնասների, մարդկանց արձագանքման և այլնի առնչությամբ), որպեսզի մտածենք, թե ինչպես ճիշտ արձագանքել և ինչպես պլանավորել ու իրականացնել ապագա միջոցառումները:</p>	<p>Сценарий землетрясения</p> <p>Феномен и то, что произойдет после землетрясения с течением времени, относящиеся к различным повреждениям, реагированию человека на него и т.д. для того, чтобы обдумать, как реагировать должным образом, а также как планировать и осуществлять будущие меры.</p>	<p>Earthquake scenario</p> <p>Phenomenon and what happen after earthquake occurs along time passes regarding to various damage, human responses and so on in order to consider how to respond properly and how to plan and conduct future measures.</p>
<p>Աղետների ռիսկի կառավարում</p> <p>Բազմավարությունների, քաղաքականությունների և դիմակայելու կարողությունների իրականացման նպատակով վարչական հրահանգների, կազմակերպությունների և գործառնական հմտությունների ու կարողությունների օգտագործման համակարգված գործընթաց, որի նպատակն է նվազեցնել վտանգների բացասական ազդեցությունը և աղետի հավանականությունը:</p> <p>Սա ներառում է բոլոր տեսակի գործողությունները, այդ թվում՝ կառուցվածքային և ոչ-կառուցվածքային միջոցառումները՝ կանխարգելելու կամ սահմանափակելու (մեղմացում և պատրաստվածություն) վտանգների անբարենպաստ հետևանքները:</p>	<p>Управление риском бедствия</p> <p>Систематический процесс использования административных решений, организации, оперативных навыков и способность осуществлять политику, стратегий, также способность общества и сообществ, справляться с последствиями стихийных рисков и бедствия природного и техногенного характера.</p> <p>Это состоит из всякого рода деятельности, включая структурные и неструктурные меры с целью предотвратить (предупреждение) или уменьшить (митигация и готовность) неблагоприятные последствия риска.</p>	<p>Disaster risk management</p> <p>The systematic process of using administrative directives, organizations, and operational skills and capacities to implement strategies, policies, and improved coping capacities in order to lessen the adverse impacts of hazards and the possibility of disaster.</p> <p>This comprises all forms of activities, including structural and non-structural measures to avoid (prevention) or to limit (mitigation and preparedness) adverse effects of hazards.</p>

<p>Աղետների ռիսկի նվազեցում (աղետների նվազեցում)</p> <p>Աղետների պատճառահետևանքային գործոնները վերլուծելու և կառավարելու միջոցով աղետների ռիսկերի նվազեցման համակարգված հայեցակարգային և գործնական աշխատանքներ, ներառյալ վտանգների նվազեցմանը, մարդկանց և գույքի խոցելիության նվազեցմանը, հողի և շրջակա միջավայրի խելամիտ կառավարմանը և անբարենպաստ իրադարձությունների նկատմամբ պատրաստվածության բարձրացմանն ուղղված միջոցառումները:</p>	<p>Сокращение риска бедствий (Сокращение бедствий)</p> <p>Концептуальная модель элементов, учитываемых с возможностью уменьшить уязвимость и риск бедствия через общество, предотвратить (предупреждение) или уменьшить (митигация и готовность) неблагоприятные последствия риска в пределах широкого контекста устойчивого развития.</p>	<p>Disaster risk reduction (Disaster reduction)</p> <p>The concept and practice of reducing disaster risks through systematic efforts to analyse and manage the causal factors of disasters, including through reduced exposure to hazards, lessened vulnerability of people and property, wise management of land and the environment, and improved preparedness for adverse events.</p>
<p>Վայրն զարգացում</p> <p>Զարգացում, որը բավարարում է ներկայի կարիքները՝ չվնասելով ապագա սերունդների՝ սեփական կարիքները բավարարելու կարողությունը: Այն ներառում է երկու հիմնական հասկացություններ. «կարիքների» հասկացությունը՝ մասնավորապես, աղքատների էական կարիքները, որոնց պետք է տրվի գերակա առաջնահերթություն, և տեխնոլոգիաների ու սոցիալական</p>	<p>Устойчивое развитие</p> <p>Развитие, которое отвечает требованиям настоящего времени, не подвергая потенциал будущего поколения опасности из-за осуществления требования современников. В него включаются два ключевых понятия: понятие «требование», в частности, существенные требования бедных людей в мире, которым должны уделять преобладающие приоритеты; и понятие</p>	<p>Sustainable development</p> <p>Development that meets the needs of the present without compromising the ability of future generations to meet their own needs. It contains within it two key concepts: the concept of “needs”, in particular the essential needs of the world’s poor, to which overriding priority should be given; and the idea of limitations imposed by the state</p>

<p>կազմակերպությունների վիճակով պայմանավորված սահմանափակումները ներկա և ապագա կարիքները բավարարելու շրջակա միջավայրի ունակության վրա:</p> <p>Կայուն զարգացումը հիմնված է սոցիալ-մշակութային զարգացման, քաղաքական կայունության և պարկեշտության, տնտեսական աճի ու էկոհամակարգերի պաշտպանության վրա, որոնք բոլորը վերաբերում են աղետների ռիսկի նվազեցմանը:</p>	<p>«ограничения» технологии и социальных организаций, наложенные штатом на способность окружающей среды ответить настоящим и будущим потребностям.</p> <p>Устойчивое развитие основывается на социально-культурном развитии, политической стабильности и приличии, экономическом росте и защите системы окружающей среды, которые все относятся к сокращению рисков.</p>	<p>of technology and social organization on the environment's ability to meet present and the future needs. (Brundtland Commission, 1987).</p> <p>Sustainable development is based on socio-cultural development, political stability and decorum, economic growth and ecosystem protection, which all relate to disaster risk reduction.</p>
<p>Դիմակայունություն</p> <p>Դիմադրելու կամ փոփոխվելու միջոցով՝ վտանգի ենթարկված համակարգի, համայնքի կամ հասարակության հարմարվելու կարողությունը, որի նպատակն է հասնել և պահպանել գործունեության և կառուցվածքի ընդունելի մակարդակը: Սա որոշվում է այն աստիճանով, որով սոցիալական համակարգը կարող է ինքնակազմակերպվել՝ մեծացնելով անցյալի աղետներից դասեր քաղելու իր կարողությունները՝ ապագայում ավելի լավ պաշտպանվելու և ռիսկերի նվազեցման միջոցառումները բարելավելու համար:</p>	<p>Устойчивость / устойчивый</p> <p>Способность системы, сообщества или общества, подвергнутых опасностям, адаптироваться посредством их противодействия к опасностям или преобразованием, чтобы их функционирование и структура достигали до приемлемого уровня и удержали данный уровень. Это определяется степенью, до которой социальная система сможет повышать свою способность для изучения прошлого, с целью создания более эффективной защиты, а также улучшать меры по сокращению рисков.</p>	<p>Resilience (Resilient)</p> <p>The capacity of a system, community or society potentially exposed to hazards to adapt, by resisting or changing in order to reach and maintain an acceptable level of functioning and structure. This is determined by the degree to which the social system is capable of organizing itself to increase its capacity for learning from past disasters for better future protection and to improve risk reduction measures.</p>

<p>խոցելիություն</p> <p>Ֆիզիկական, սոցիալական, տնտեսական և բնապահպանական գործոններ կամ գործընթացներ, որոնք մեծացնում են տարածքի կամ համայնքի զգայունությունը վտանգների ազդեցության նկատմամբ:</p> <p>Մարդկանց՝ վտանգներին դիմակայելու կարողությունը բարձրացնող դրական գործոնների համար տե՛ս «կարողության» սահմանումը:</p>	<p>Уязвимость (хрупкость)</p> <p>Состояние, определяемое физическим, социальным, экономическим и экологическим факторами или процессами, которые повышают подверженность сообщества воздействию опасностей.</p> <p>Для позитивного фактора, который повышает способность населения бороться с опасностями, см. дефиницию «потенциал».</p>	<p>Vulnerability</p> <p>Factors or processes, physical, social, economic, and environmental, which increase the susceptibility of an area or a community to the impact of hazards.</p> <p>For positive factors, which increase the ability of people to cope with hazards, see definition of capacity.</p>
<p>Կրիտիկական ենթակառուցվածքներ</p> <p>Ֆիզիկական կառույցներ, հարմարություններ, ցանցեր և այլ միջոցներ, որոնք մատուցում են այնպիսի ծառայություններ, որոնք էական նշանակություն ունեն համայնքի կամ հասարակության սոցիալական և տնտեսական գործունեության համար:</p> <p>Դրանք ներառում են տրանսպորտային համակարգերը, օդային և ծովային նավահանգիստները, էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և կապի համակարգերը, հիվանդանոցները և առողջապահական կլինիկաները, ինչպես նաև հրշեջ, ոստիկանության և պետական կառավարման ծառայությունները:</p>	<p>Критическая инфраструктура</p> <p>Физические структуры, объекты, сети и другие средства, предоставляющие услуги, которые необходимы для социального и экономического функционирования сообщества или общества.</p> <p>К ним относятся такие объекты, как транспортные системы, воздушные и морские порты, системы электро- и водоснабжения и связи, больницы и поликлиники, пожарная охрана, полиция и государственная администрация.</p>	<p>Critical infrastructure</p> <p>The physical structures, facilities, networks and other assets which provide services that are essential to the social and economic functioning of a community or society.</p> <p>They include such things as transport systems, air and seaports, electricity, water and communications systems, hospitals and health clinics, and centres for fire, police and public administration services.</p>

<p>Ավելի լավի կառուցում</p> <p>Աղետից հետո պետության և համայնքների դիմակայունությունը բարձրացնելու համար վերականգնման և վերակառուցման փուլերի օգտագործումը՝ աղետների ռիսկի նվազեցման միջոցառումները ֆիզիկական ենթակառուցվածքների ու սոցիալական համակարգերի վերականգնման, ինչպես նաև կենսամիջոցների, տնտեսությունների և շրջակա միջավայրի աշխուժացման մեջ ինտեգրելու միջոցով:</p>	<p>Строить лучше, чем было</p> <p>Использование этапов восстановления, реабилитации и реконструкции после бедствия для повышения устойчивости наций и сообществ путем интеграции мер по снижению риска бедствий в восстановление физической инфраструктуры и общественных систем, а также в восстановление средств существования, экономики и окружающей среды.</p>	<p>Build Back Better</p> <p>The use of the recovery, rehabilitation and reconstruction phases after a disaster to increase the resilience of nations and communities through integrating disaster risk reduction measures into the restoration of physical infrastructure and societal systems, and into the revitalization of livelihoods, economies and the environment.</p>
<p>Ռիսկի հաղորդակցություն</p> <p>Տեղեկատվության և կարծիքների փոխանակում անհատների, խմբերի, կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի միջև՝ ռիսկերի հարցը ավելի լավ հասկանալու և դրա վերաբերյալ ավելի լավ որոշումներ կայացնելու նպատակով:</p>	<p>Коммуникация о рисках</p> <p>Обмен информацией и мнениями между отдельными лицами, группами, организациями и другими заинтересованными сторонами с целью лучшего понимания вопроса о рисках и принятия более эффективных решений по нему.</p>	<p>Risk communication</p> <p>An exchange of information and opinions among individuals, groups, organizations, and other stakeholders in order to understand the issue on risks better and make better decisions about it.</p>
<p>Ճգնաժամային հաղորդակցություն</p> <p>Հիմնականում տեղեկատվության հավաքագրում և տարածում աղետներին արձագանքման փուլում՝ նպատակ ունենալով բարձրացնել իրազեկությունը,</p>	<p>Кризисная коммуникация</p> <p>В основном для сбора и распространения информации в период реагирования на бедствие с целью повышения осведомленности, изменения поведения и</p>	<p>Crisis communication</p> <p>mainly for the collection and dissemination of information during the disaster response period, with the aim of raising awareness, changing behavior and contributing to the</p>

<p>փոխել վարքագիծը և նպաստել անվտանգության միջոցառումների արդյունավետ իրականացմանը: Այն ռիսկի հաղորդակցության մի մասն է և ապահովում է տեղեկատվության հավաքագրման և հաղորդակցության շարունակականությունը աղետից առաջ, արտակարգ իրավիճակներին արձագանքման և վերականգնման/վերակառուցման փուլերում:</p>	<p>содействия эффективному осуществлению мер безопасности. Она является частью коммуникации о рисках и обеспечивает непрерывность сбора информации и коммуникации на этапах подготовки к бедствию, реагирования на чрезвычайную ситуацию и восстановления/реконструкции.</p>	<p>effective implementation of safety measures. It is a part of risk communication and ensures the continuity of information gathering and communication in the pre-disaster, emergency response and recovery/restoration phases.</p>
---	--	---

**ԱՂԵՏՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ
ԵՎ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Տպագրությունը՝ օֆսեթ
Չափսը՝ 60×84 1/16
Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 5.75 տպ. մամուլ

Տպագրվել է «Մագաղաթ» հրատարակչության տպարանում

